

# ԾԻԼՆ ԱԿԱՐԱՅՐԻ

Ա. ՏԱՐԻ 1866 ԹԻՒ Դ.  
ԱՊՐԻԼ

## ԱԶԳԱՅԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ  
ՆԵՐԱԾՈՒ ԵՎ ՄԱՀԻՆ ՄԻՆՉԵՒ ՄՍՏԻՇՈՍ ԱՌԱՋՆ ՄԱՀԻՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ  
1857 — 1866

(Եարունակութիւն. Տես Թիւ գ. երես 452).  
—

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Մատթէոսի, Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուելուն տպա-  
ւորութիւնն իր վրայ՝ եւ իրան ճանաչող ազգայնոց. — Պօլսոյ Խառ-  
գիւղայւոց խլրառումը նրա ընտրուելուն դէմ. — Հրամանով՝ Ռու-  
սաց տէրութեան, Մակար եպիսկոպոսը, Բաքամետան Մկրտիչ վար-  
դապետը եւ Փափազեան Գալուստ վարդապետը հրաւիրակ կը  
զրկուին Պօլս Մատթէոսի կաթողիկոսութիւնը չնորհաւորելու եւ  
իրան Եջմիածին՝ հրաւիրելու. — Մակար եպիսկոպոսի Թիֆլիզ հան-

դիպած ժամանակ, Թիֆլիզեցոյ իրան արած գանգատը Զալալեան Սարգիս եպիսկոպոսէն . — Պուրասյու առաջնորդ Գէորգ եպիսկոպոսը Կոսդանդնուազօլսոյ Պատրիարք կանուանուի . — Սրա եւ նորընտիր կաթողիկոսի մէջ եղած հակառակութիւնքը . — Եջմիածնի հրաւիրակների տեսած ընդունելութիւնը թէ Բարձրագոյն դռնէն եւ թէ Թուրքիոյ ազգայնոց մէջ . — Զալալեանց Սարգիս եպիսկոպոսի լրտեսներն ու թղթակցները Պօլսոյ մէջ . — Ռուսական կառավարութեան հրամանով, Թիֆլիզեցի Միքայէլ Լոռու Մէլիքեանց Հայազգի զօրապեաը, իր կողմէն հրաւիրակ կը նշանակուի եւ Կոսդանդնուազօլսոյ կը դրկուի Սատթէոս Կաթողիկոսին Ռուսաց երկիրն էջմիածնի հրաւիրելու . — Պօլսոյ Ռուսաց գեսպան (գործակատար) իշխան Նաբանովի մի այցելութիւնը Սատթէոս կաթողիկոսի տանը Օրթագիւղ . — Տատեան Պօլսոյ բէզի արած իշխանական ընդունելութիւնը Միքայէլ Լոռու Մէլիքեանցին եւ նրա ուղեկից Միքայէլ Միքանարեանցին եւ Թուրքառուս Գօծօքովին . — Մ. Լոռու Մէլիքեանցի այցելութիւնը նախ ՚ի գեսպանատուն Ռուսաց եւ ապա ՚ի Պատրիարքարան Հայոց . — Գաղանի խորհուրդ Տատեան Պօլսոյ բէզի տանը ՚ի Բերա . — Մ. Լոռու Մէլիքեանցի այցելութիւնը Սատթէուսին Օրթագիւղ . — Գէորգ Պատրիարքի նախագահութեամբ Պատրիարքարանումն եղած գաղտնի ժողովը Հոգեւոր եւ Գերագոյն ժողովների անդամներով եւ Մ. Լոռու Մէլիքեանցի մասնակցութեամբ, Սատթէոս Կաթողիկոսէն թագուն . — Այս գաղտնի ժողովների շնորհ գործն է լինում ինչիք և առաջարկութիւնն ասուած գրուածքը Տաճկաստանի Եկեղեցականաց եւ ժողովրդականաց կողմէն . — Յիշատակարան խմբագրասլի նկատողութիւնքը ինչիք և առաջարկութիւնն ասուած գրուածքի վրայ . — Նկատողութիւնն նոյն խընդիր եւ առաջարկութիւն գրուածքին վրայ Ռուսիոյ ազգայնոցմէ . — Գէորգ Երամեան, Կարապետ Գրիգորեան, Պօլսոյ Տատեան, Յովհաննէս Տատեան ստորագրութեամբ մինամակ այս ինդիր եւ առաջարկութիւն գրուածքի մասին Մ. Լոռու Մէլիքեանցին . — Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէն Սակար Եպիսկոպոսի այցելութիւնը Յունաց Պատրիարքին . — Գէորգ Պատրիարքի եւ Մատթէոս Կաթողիկոսի հակառակութիւնքը մի կոնքեսի համար . — Պօլսոյ ազգայնոց տուած փառաւոր կոչունքը Մ. Լոռու Մէլիքեանցին եւ Միքայէլ Միքանարեանցին ՚ի նշան սիրոյ եւ պատուոյ Թուրքիոյ Հայոց կողմէն Ռուսիոյ Հայոց . — Պալեան Կարապետ Ամիրայի հրաւէրն ՚ի Պէտրիթաշ . — Ռուսանայ վաճառականաց տուած ճաշը Մ. Լոռու Մէլիքեանցին եւ Մատթէոս Կաթողիկոսին եւ Գէորգ Պատրիարքին, նոյնպէս ՚ի Պէտրիթաշ . — Մ. Լոռու Մէլիքեանցի անսած



կաթողիկոսութեան նշանակութիւնն որ՝ Մատթէոսէն յառաջ շատ բարձր էր Հայոց ժողովրդեան երեւակայութեան մէջ , մանաւանդ Ներսիսի նման կաթողիկոսի արժանաւորութեամբը , Մատթէոսն ընտրուելով՝ առ հասարակ ամենայն Հայոց կաթողիկոսութիւնն իր նշանակութենէն կորցուց , վասն զի ժողովուրդն ինքն իրան ասաց : Ուրեմն մեր գիտեցած և ճանաչած Մատթէոսն էլ կարող է ամենայն Հայոց կաթողիկոս ընտրուիլ . նա որ , երկերեսանի , փոփոխամիտ քափուոին մէկն էր , նա որ՝ իր Զմիւռնիոյ առաջնորդութեան ժամանակ Սիւնեաց ընկերութեան գրեթէ կործանուելուն պատճառ եղաւ , Փօլոյց Պատրիարքութեան ժամանակն ազգը երկու կուսակցութեան բաժանեց , Բողոքականաց և Պապականաց կուսակցութեան , յետոյ Շահնազարեանց կարապետ վարդապետի գէմ խռավութիւն յարուց ամիբայքը գրգռելով , Արմաշու առաջնորդ եղաւ և այն տեղ 450,000 զուռուշ պարտք անելով՝ հինգ ամսէն յետ կանչուեցաւ այդ տեղէն , որու պարտքը , կասեն , մի պայմանով ամիբայլն մէկը վճարել է . յետոյ թէ՝ Պապական հոգւով գրքեր ունի շինած և Փօլոյց հոգեսոր ժողովէն արգիւուած , թէ Համաներ ունի պասկած սիմօնականութեամբ , թէ վարդապետներ ունի ձեռնադրած առանց Պատրիարքի և Հոգեւոր ժողովի հաւանութեան . և այլ սրանց նման բաներ : Ուրեմն այսպիսի մի եկեղեցական կարող է կաթողիկոս լինել . այս էր առհասարակ ժողովը դականաց դատողութիւնը , այս խօսքերն էին առհասարակ լուսում Մատթէոսի ճանաչող թէ եկեղեցական և թէ աշխարհական անձանցմէ . բայց միւս կազմէն էլ բարեմիտներն առումէին : լ'հ , այսուհետև Մատթէոսն իր փառասիրութեան կատարին հասաւ . էլ իր անձնական բնութիւնքը կը թողու . էլ ծանր կը կենայ իր տեղը , վոքրահոգութիւն չի անել , երկերեսանութիւն ամենան . ի՞նչ ունի էլ ցանկանալու . իրաք բարձր մարդ չկայ ազգի մէջ , ուստի լաւ բաներ կանէ , գըտը լոյներ կը հասասատէ կ'ըմիածին , ուզարաններ կը բանայ Հայաստան , ուստի մասականներն յառաջ կը քչէ օդնելով նրանց , ուստի զի հութեամբ վարդապետներ յառաջ կը բերէ , արժանաւորներին եպիսկոպոս կօրհնէ : իսկ իրավն խիստ մօտանաց ճանաչողները , երբ լուսում են թէ դա կաթողիկոս է ընտրուել ,



դուրս եկաւ, մինչև այս ժամանակ Հայոց բոլորովին անծանօթ մի խնդրի մասին. Պատրիարքը հրաժարական տալով կրօնական և Քաղաքական ժողովների կործանուելը պատրաստեց և շատ չանցիցաւ այդ բանն էլ կատարուեցաւ. Սահմանադրութեան գործն հենց այս ճգնաժամուն կանդացաւ անուանովի մարդկանցով և ոչ ընտրովի, ընդհանուր ժողովին բերանը կարկուեցաւ. Կաթողիկոսի խնդիրը քննող յանձնաժողովն էլ կախ մնաց, բանըն այս էր. մեր Պօլոյ ազգայինք անկարող գործ տեսնելու շինել, անկարող կաթողիկոսի վիճակը քննելու դուրս բերել, անկարող աշխարհական և եկեղեցական ընդհանուր ժողովով կաթողիկոս ընտրելու հռչակել. մի խօսքով, մեր Պօլոյ ազգայինքը, առաջինքն մեր ընդհանուր ազգայնոյ մէջ, մի օրինաւոր ազգային վարչութեան տակ մտնելու համար ամեն ճիդը թափող և ամեն ջանքն անող, անդամալոյց ցոյց տալ բոլոր աշխարհին իր անդամալոյց Սահմանադրութեամբ. Ահա՛, այս է սյդ բոլոր յանկարծակի փոփոխութեանց գլխաւոր պատճառները. թէև անձնական կրքերն էլ այդ միջոցին իրանց գործերը տեսան և երկու մունետիկ էլ գտնուեցան մինը եկեղեցիւմը, միւսն օրադրումը այդ եղած բաներն իբրև օրինաւոր քարազող և հռչակող.

Սուրբ Աթոռոյն տեղապահ և Սինօդի առաջին անդամ Արքածածունի Դուկաս եպիսկոպովին առաջարկութեամբ և կայսերական հրամանով նշանակւումէ հրաւիրակ, սուրբ Աթոռոյն աւագ լուսարար և Սինօդի երկրորդ անդամ Մակար եպիսկոպոսը կոստանդնուպոլիս գնալ և չնորհաւորել Մատթէոսին իր կաթողիկոսութիւնը և մի և նոյն ժամանակ հրաւիրել նրան էջմիածին, Մակարի հետ լինում են նաև իբրև ընկեր Բաբամերան Մկրտիչ վարդապետը Երևանցի, սա ոչ Սինօդի անդամ է լինում և ոչ նշանաւոր վարդապետ, այլ Ներսիսի ժամանակ Երևանու վիխանորդ. Փափազեան Գալուստ վարդապետն Պօլսեցի, սա էլ իբրև թարգման. Այս վարդապետը Մատթէոսի խնդրիքով Ներսիսին ուղարկուած է լինում ուսումըն ստանալու և եկեղեցական լինելու. Ներսէս էլ նրան գօրպատու համալսարան է ղրկում ուսում առնել տալի ու եկեղեցական է ձեռնադրում է նրան. յետոյ այրի մնալով շուշտակ



խիստ վասնդաւոր հետևանք պիտի ունենան : Մակար եպիսկոպոսը խոստանում է դըանց , որ ինչքը Պօլիս հասածին ալէս , մի առ մի ամեն բան իր հանդամանքներովը կը պատմէ կաթողիկոսին և մի դարման անելու այդ վաստ բաներին կը պատրաստէ նրան : Ուստի ինչպէս ասած ենք վերեւն , Մակար , յուսովլիքը , եկեղեցւոյ մի նոր դարագլուխ տեսնելու Ուստաստանեայց և Տաճկաստանեայց Հայոց միութեամբն , որն որ կատարւում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեամբը և երեւելի արքեպիսկոպոսներ , որ այնքան տարի Պատրիարքութիւն են արել , աղդ ու ժողովուրդ են հովուել , Սուլթանների և Վէղերների դիմացն են ելել , մինչև անդամ կաթողիկոս լինելու պատիւ են ունեցել : Այս զգացումնվ լեցուած դափն է Մակար Պօլիս , և ուղակի Պատրիարքարան է գիմում և յիրաւի ինչպէս և իր բերնեն էլ ենք լսել , մեծ հիւրընկարութիւն և արժանավայել ընդունելութիւն է տերոնում Պօլսոյ ազգայնոցմէ և Բարձրագոյն դունէն : Նորին տիր կաթողիկոսին հետ և պատիւ է ունենում առաջն ելել վէհափառ Սուլթան Մէծիսին և ստանալ նրամէն մի փառաւոր շքանշան . նոյնպէս և իրան հետ եկող վարդապետները , իրան համար մի առանձին ստուն են պատրաստում որ իր վարդապետներովն հանդիսատ բնակի , նոյնպէս ամեն մեծամեծ ժողովրդականք հրաւէրներ են անումնրան , թէ իրանց տներումը , թէ եկեղեցիներումը : Ճշմարիտն ասելով , Պօլսոյ մեր ազգայինք մի անձի պատիւ տալու համար , միշտ պատրաստ են եղել և ոչ ինչ չեն խնայել , և իրանց հիւրասիրութիւնն ամեն տեղ տարածուած է իբրև իրանց սեպհական յատկութիւն : Այս միջոցին մենք մեր աշքովն աեսանք առ հասարակ Տաճկաստանի Հայոց թէ աշխարհականք և թէ եկեղեցականք ինչպէս յարդ ու պատիւ տուին կաթողիկոսի ընարտութեան առթով , Ուստահայոցմէ եկող ազգայնոց , ոչ թէ այս ակնածութիւնն այս անդամ են ցոյց տուել թուրքիոյ ազգայինք Ուստիոյ ազգայնոց , այլ միշտ , չենք իմանում մի ո՞ր տեսակ զգացողութեամբ Թուրքիոյ Հայն իրմէ բարձր է ճանաչել Ուստիոյ Հայուն , ինչպէս աշխարհական կարգին մէջ նոյնպէս եկեղեցական . բայց այսօր հանդամանքն շատ փոխուեցաւ , Պօլսոյ ազգայինք իրանց դործերով կորցուցած



փոխանակ այդ բաները բուն իրանց նշանակութեամբը տեսնելու, տեսնում է, որ, ի՞նչ է տեսնում, Պատրիարք և կաթողիկոս իրար հետ ընկած, իրար թշնամանում, իրարու վըրայ խօսում, իրար գատաստանի հրաւիրում։ Անունով հոգեւոր ժողով կայ սրա նրա բերնումը, և այդ ժողովը ոչ կարգունի, ոչ կանոն։ Մի գերագոյն ժողով էլ աշխարհականներով կազմուած, որ աւելի մի խրոռութակ է իր անունով քանի թէ անօրէն, կարգադիր և մերահայեցող։ իրաւասութիւն չկայ, այլ հրամանատուութիւն։ այդ իշխանութիւնն էլ մի քանի ամիրայք իրանց ձեռին են առել և ինչպէս կուզեն այնպէս կը վարեն ու ի՞նչ կուզեն այն կանեն։ Պատրիարք, կաթողիկոս, արքեպիսկոպոս, վարդապետ և բոլոր ուխտելեղցւոյ այս ամիրաների առջև ծունկ կը չոքէն, նրանց փէշը կը լզեն, նրանց ամեն տեսակ կամեցողութեան գործի կը լինին։ մինչև անգամ իրանց մօրուքը կը տան նրանց ձեռին, որ շյելիս քաշըշէն ու բղբտեն։ Մակարը սարսափում է և զարմանում, ուստի առաջուց լինելով բնութեամբ մի փոքր անշարժուն և անխօսուն, էլ բոլրովին արձան կտրւում կուռք է գառնում ու իր միաքն է գնում, որ այս պղտըտիկ մարդկանց ահագին բեռներով, ընդարձակ հրապարակի մէջ դէշ սուգէն վազլըզելը նկատէ և մէկին կամ մէկալին իրանց բեռների տակին ընկծիլը կամ թէ իրանց ծանր բեռնով միւս բեռնաբարձին գլորուելն իր բեռնին տակ, տեսնէ։

Ինչպէս ասացինք արդէն, Մատթէոս, կաթողիկոս լնտըուելուց յետոյ, Գէորգն էլ Պոլայ Պատրիարք է կարգւում ու գալիս փառաւորապէս իր պաշտօնի գլուխն է անց կենում։ Մատթէոսն արդէն խրոխտ և իր գլուխն արդէն շատ բարձր համարող թուրքիոյ ամեն եափսկոպոսների վրայ և վրէժինդութըութեան ժամանակն է ասելով, սկսում Գէորգի ամեն գործերին խառնուիլ, հրաման զրկել Պատրիարքարան թէ կաթողիկոսի կամքն այս է, այս ինչ բանն այն կերպով տնօրինուելու։ թէ այս, այսպէս արէք ասելով։ Գէորգն էլ նրան, գու գեռ կաթողիկոսի իշխանութիւնը չունիս, այլ միայն անունը, գնաւ էջմիածին, օծուիր կաթողիկոս, նստիր աթուղթ, և ազա իշխանութիւն վարէ, ասումէ։ Մատթէոս եկեղեցականներին և ժողովրդականներին գրդուումէ Գէորգի գէմ։



որոնց օգնութեամբ դեռ այսօր էլ մի բան է աղքային վարչութեան մէջ, վեր էր կացել Ռուսաց դեսպանին երկար բարձր տեղեկութիւն տալու ԶԵՂԹՈՒՆՅԵՍ և բարձրագոյն Դրան մէջ անցկացած բաների մասին։ Այս եկեղեցականը կարծում էր թէ այդ բանով իր աղքին օգուտն է մտածում։ Նոյնպէս կաթողիկոսական խնդրի մէջ էլ տանող բերող լինելու աղքային վարչութեան և Ռուսաց դեսպանութեան մէջ իրան բարձր պատիւ էր համարում և իբրև թէ աղքի և եկեղեցւոյ համար լաւ բաներ է անում։ Ահա, այսպիսի մարդիկ և այն ժամանակ, որու վրայ խօսում ենք, վեր էին կացել, ինչպէս Պոլիս, նոյնպէս Թիֆլիզ ամեն աղքային խնդրի և դործ։ անշուշտ իրանց անձի օգտի համար և ոչ աղքի եկեղեցւոյ՝ խմայ էին անում Ռուսաց տէրութեան։ այդ անձանց անուններն այս տեղ հարկաւոր չենք համարում նշանակել։ Ժամանակին իրանք իրանց կը յայտնուին։ Խոկ Սարգիս Զալալեանց ըն այս աեղ Պօլիս ուրիշ թղթակիցներ ու լատեններ ուներ մեր ամեն ընտանեկան բաներն իմանալու համար։ Դամ իր աղքականի մէկին Զալալ անուն մի երիտասարդ, իբրև թէ աստուածաբանութեան ուսումը սորմելու համար (շլուած գիտութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ համար, որ Պատականութենէ փոխ առևին մերայինք այս վերջին ժամանակիները), զրկում է Զամուրճեան Տէրոյենց Յավհաննէս Պատուելոյն մօտ, այդ է լինում այս փոքրիկ Զալալին արտաքին դործը Պօլսոյ մէջ, բայց ներքին պաշտօնն է լինում գիտակցութեամբ և օգնականութեամբ իր ուսուցչին և ուրիշ պաշտպաններին, մանրամասն տեղեկութիւն տալ ամեն թղթատարով Սարգիս Զալալեանցին Մակարի արարաննքի մասին Պօլսոյ մէջ, Մատթէոսի վարմունքի մասին, տմիրաներու կարծիքի և Պատրիարքի շարժմունքի մասին։ Եղած և լինելու բաների նկատմամբ։ Բայց այդ փոքրիկ Զալալը իմանալով հարկաւ թէ ի՞նչ պաշտօն կատարելու համար է եկել Պօլիս և ոչ գիտութիւն և ուսումնորմելու, ձեռք վեր է առնում այդ բաներէ և իր խելքն ու սիրտը տալիս է մի գեղեցիկ կուսի վրայ և սիրահարւումէ ու փոխանակ աստուածաբան հայկաբան լինելու, մի ցնորսուած և շըշկուած անձ է լինում, այնպէս որ, իմանալով Զալալեանց Սարգիս դրան յետ է կանչում, և ցաւելով ասումէ Թիֆլիզու



անելու ժամանակով։ Սարդիս ջալարեա՞նցը և գէորդ վեհաշպետեա՞նցը պիտի լինէին ձայն հանողները, ամենեւին ո՛չ, գէնն էր մնում էջմիածնի միաբանութիւնը, որոյ գլուխն էր Ղուկաս եպիսկոպոսը, դրան էլ արդէն մի նշան տալով պատրաստել էին քնեցնել, մնում էր նաև Մատթէոսի վրայ ու նեցած կասկածանքը, նա էլ սուտ խենդ լինելով թողնում էր, որ ինչ որ կուղին անեն մինչև որ ինքը էջմիածնի գնայ մի անդամ օծուի և կատարելապէս կաթողիկոս լինի. վասն զի նա վախենում էր, որ իրան դէմ մարդիկ դուրս կը դան և արդեւը կը լինին կաթողիկոս օրհնուելու ։ Ո՞վ կար դէնը, մի քանի մանր մունք մարդիկ, անպաշտօն և անփող թիֆլի զումն, որոնց ամենեւին նշանակութիւն չէր տալի և Զալաւեանցն էլ սաստիկ հալածանք էր յարուցած նրանց դէմ Ըթրանդ, անհաւատ. ապստամբ ամբաստանելով նրանց, որպէս զի ժողովուրդը նրանց ամենեւին մոտիկ շանէ և նրանց խօսքին չաւատայ. իսկ Պօլումը ժողովուրդը քնած էր ու քնած, ամենեւին անստեղեակ և իրան համար իրբեւ չեղած բան Ռուսական բանեցնելու քաղաքականութիւնը չայց մէջ և արդէն այն աստիճան տկար էլ էր իր ազդեցութիւնը, որն որ կարելի էր մի ժպիտով, մի ձեռք տալով նրան խաբել ու որսալ, ինչպէս անում էր ինքը Միքայէլ լոռու Մելիքեանց ցըն Պօլիս եղած ժամանակ. Եկեղեցականք որ կասես, գըժուել էին այն ժամանակ թէ արդեօք ի՞նչպէս կարող կը լինին Ռուսաց կառավարութենէն նշան, նշանակութիւն ստանալու և շատ հեռու էին նրա խորամանկութիւնը ճանաչելու. իսկ Տէրոյենց պատուելին որ կասես, այս միջոցին կարծես Արիմելէքի քնումն էր ընկղմած, տեսնում էր Մատթէոսի խաչանիշ տօներ հաստատելը ատանցուցի մէջ և վեր էր կացել բողոքելու, իրբեւ թէ մի կաթողիկոս առանց ազդային ընդհանուր եկեղեցական ժաղովի ոչ ինչ տնօրէնութիւն չէ կարող անել (այսօր սրա հակառակը կը պնդէ) իսկ ուրիշ անյիշ ցած ու անյ կենալու բաների մասին բոլորովին խուլ և կյոր էր ձեւանում իրբեւ չասկացող. նրա համար, որ ամենէն յառաջ նրա բերանն էր խցել Զալաւեանց Սարդիսը : Բայց մի անձ կար մոռացուած որսալու, կամ շատ հաստաղլու խ համարելով կամ շատ անտարբեր և անզգայ ազգի և եկեղեցւոյ գոր-



գիտէ , որ հայն գեռ իր հայուն վրայ վաստահաթիւն ունի և կը հաւատայ : Բայց երկրորդ պատճառն Հայ ծառայող զրկելուն Փօլիս , Հայոց զարմացնել և Օսմանցւոց ու ուրիշ ազգերի ցոյց տալ թէ ինչպէս Ռուսք Հայոց կը սկրեն և պաշտօնեց ըի կը հասցունեն :

Այս կրկնակի պաշտօնը կատարելու յանձնառու եղողն է Թիֆլիզու Հայոցմէ Միքայէլ Լոռու Մելիքեանց (այսինքն բառ իրան Հայոց Լոռու նահանգի մի Մելիքի ցեղէն) եռասունի և քառասունի մէջ մի մարդ , գեռ նոր ստացած զօրապետութեան աստիճանը , նոյնպէս նոր ամուսնացած Մովսէս Արզութեանց իշխանի աղջկան հետ , այսպիսի փառքեր ճրագով վընտրուող և իր քսակէն փող տուող մարդ : Բայց նոյնպէս Թիֆլիզու Հայոցմէ ոմանք , որ տեղեակ են լինում այս եղած և իւնելու բաների վրայ և թէ դրանք ի՞նչ նպատակով են պատրաստում և ինչ հետեւանքն են յառաջ բերելու , լոռու Մելիքեանց Միքայէլին յորդոր են տալի յետ կենալ և ձեռը վեր առնել այդպիսի մի պաշտօն կատարելուց , որու ազգ և եկեղեցի կործանելու նպատակ ունենալը ցոյց են տալի իրան : Բայց նա իր փառասիրութեամբը կուրացած և իր տգիտութեամբն անկարող խորն իմանալու իր կատարելու պաշտօնի նպատակն ու հետեւանքը , պինտ մնում է Ռուսաց կայսրմէն կամ նրա տեղակալ Բարիսատինսկու իշխանէն իրան առաջարկուած պաշտօնը ընդունելու և կատարելու հաւատարմութեամբ , բոլորովին ականջներն խցելով իր սիրելի բարեկամներին և թերեւս իր բարերարներին խորհուրդներին ու վերէ կենում գալիս կոսդանողնուազօլիս : Մինչդեռ լոռու Մելիքեանց Միքայէլն գալու վրայ է լինում Պօլիս և արդէն իմացուած իր գալուստը Ռուսաց գեւապանին , մի դէպք , որ մեր աչքին առջև անցկացաւ , հարկաւոր ենք համարում , ինչպէս որ եղել է մեր ընթերցողին յառաջը բերել . որպէս զի լաւ հասկանայ մեր ասածների ճշտութիւնը այն ժամանակուայ Ռուսաց կառավարութեան բանեցուցած քաղաքականութիւնը Արեւելքումը և մերայնոց կամ թէ այն անձանց , որոնք նրա առջև չնորհք էին գտել արած շողոքորմութիւնը և խարեւբայութիւնն իրանց անձի օդտի համար և ոչ ազգի ու եկեղեցւոյ :



կարգելու , որպէս զի մեր խեղճ ազգն էլ Ուռասաց Ամենալոր մած կայսեր պաշտպանութիւնը վայելէ ” : Այս թուղթն որն որ ներկայացուցին Ուռասաց գեսալանին Մատթէոս կաթողիկոսն ու Տատեան բէդերն , ոչ կարսէն , ոչ Վանին , ոչ Խարբերդէն էր եկած , այլ Պանտրմայի Հայոց ժողովրդէն էր ուղղուած , թէ որ չեմ սխալում , Պատրիարքարանին , իրանց մէջ եղած մի ժողովրդային տարածայնութեան համար , որոյ մասին Մասսիս լրագրի գործակատար Պանտրմայի պարսն Յարութիւնն էլ այդ ստորագրուած թուղթը բերելով , կաթողիկոսէն այն օրերը խնդրում էր մի խնամք տանիլ : Մատթէոսն և Տատեան բէդերը Հայոց ու որդի այս ստորագրութեամբ լիքը թուղթը յառաջն հանեցին Լաբանով իշխանին , իբրև խնդիր Հայաստանի ժողովրդի կաթողիկոսին ուղղուած , որպէս զի Ուռասաց կայսրմէն պաշտպանութիւն խնդրէ իրանց համար , այն քաղաքները հիւպատներ զրկելով : Դեսպանն ուրախ գէմչքով , ասաց մեր բերնով , Մատթէոսին “ թէ խիստ լաւ , թող նորին սրբութիւնն իրան յանձնէ այդ խնդրագիրը և ինքն էլ զէդրբուրդ զրկելով այդ կայսեր կամ Մինհստրին , նորին սրբութեան կողմէն , անմիջապէս դրա գործադրութեանը հոգ կը տարուի ” : Կաթողիկոսն ու բէդերը շլոթուեցան և իրարուերես նայեցան , բայց Մատթէոսն անմիջապէս պատասխանեց թէ . “ լաւ , մի օրինակն հանել տամ ինձ համար , յետոյ մի քանի օրէն խկագիրը կը զրկեմ ” : Դեսպանն էլ հաճեցաւ այդպէս անելու , վասն զի երբէք մոքով չէր անցկացնէր թէ իրան այս կերպով խարում են : Այսպէս , ուշիմ ընթերցով , այս տեսակ ծաղըելի խաղերով խարում էին Ուռասաց կառավարութեան , այս ազգասէր կարծուած կաթողիկոսն ու բէդերն , չենք խմանում ինչ նպատակով . բայց միթէ կարող եղան խարել , ոչ ամենեւին . վասն և Խարբերդու բնակիչներէն վերջապէս թագուն էջմիածին ու Թիֆլիզ եկան , և թագուն հպատակութիւնն ստացան Ուռասաց կառավարութենէն . այդ հպատակների պատճառով պէտք էր այդ քաղաքներում հիւպատներ նստէր և Ուռասաց կառավարութեան թագուն ներդործութիւնը , Հայաստանի ժողովրդեան վրայ ակներև կերպով լինէր : Բայց չյաջողեցաւ : Թողթ լաւ գիտեան Ուռասաց պաշտօնաւորք , որ այսուհետեւ , մեր եկեղեցաւ



Եղաւ . առանձին կառ.ք և ձիանք պատրաստուեցան ծովել զերքի վրայ, ուր շոդենաւը պիտի կանդնէր . առանձին սպասաւորներ նշանակուեցան ծառայելու եկող հիւրին . բերայի մեծ փողացումը մի առանձին փառաւոր տան պատրաստուեցաւ նրա համար կայարան , ամեն տեսակ կահ կարասիքով : Կոստանդնուպօլաց մեծամեծք հրատիրուեցան այդ տանը ընդունելութեան ժամանակ , ջատեանք , Պայեանք , Միսաքեանք , Խորասանձեանք ներկայ էին : Միքայել վառաւորապէս ընդունուեցաւ նոյնպէս իր հետն եղող անձինք էլ , որք էին թիվլիգեցի Միանարեանց Միքայէլն , զինուորական պաշտօնաւոր : Միքայել միւս օրն իր այցելութիւնն արաւ Ռուսաց գեսպանին և էլ այնուհետեւ իր բոլոր ընթացքը վարում էր գեսպանի տուած հրահանդի համեմատ . մի քանի օրէն յետոյ բարձրագոյն դռնէն էլ մի առանձին պաշտօնակալ նշանակուեցաւ , իրեւել թիկնապահ լուսու Մելիքեանցին քամակէն գնալու , ուր որ նա կամենայ գնալ : Այցելութիւնք սկսան յաճախուիլ , ինչպէս Հայոց կողմէն , նոյնպէս և օտար ազգաց , ամեն մարդ ցանկանում էր այս Հայ զօրապետին տեսնել . մի նոր բան էր այդ Պօլսոյ ազգայնոց համար թերեւս տեսնել . մի Հայ , որ նշաններ է կրում կուրծքի վրայ , կողքը թուր է կախ արել . փունջեր ունի ուսերի վրայ և ուր կերթայ , զինուորականք սուինով կը բարեւեն և այլ սրանց նման բաններ :

Լորու Մելիքէնց Միքայելի Պոլիս հառնելուց , երկու կամ երեք օր յետոյ , խօսք եղաւ . և լուր տարածուեցաւ թէ պէտք է նախ՝ նա Պատրիարքին անէ իր այցելութիւնը և ոչ կաթողիկոսին : Գէորգն այս համբաւը լսելուն՝ մեծ հանդէս պատրաստեց խում խալիու . եպիսկոպոսներ , վարդապետներ , քահանաներ և գալիրներ ժողովուեցան , զգեստաւորուեցան ձեռքերնին մոմեր , խաչեր , գրքեր առին , մի խուռն բաղնաւթիւն մարդկանց և կանանց Մայր Եկեղեցւոյ բակումը և փողոցումը կանդնած մնացին : Խակ վերը Պատրիարքարանի սրահու գէորգն փառաւորապէս պատրաստուած իր չորս կողմն նշանաւոր Եկեղեցականներով և աշխարհականներով կապատէր ու կապասէր կաթողիկոսի հրաւիրակին , Ռուսաց տէրութեան

կողմէն զրկուած , որ առաջ իրան էր մատուցանում այցելու թեան յարգանքը : Ներսէը մեծ սենեկումն էլ , մի հոյակապ սեղան պատրաստուած էր ամեն տեսակ ձկնեղէնով , մրգե զէնով , քաղցրեղէնով և մուղէնով . խալ խմիչք ամեն յանկին , ոգելիցն առանձին , գինին առանձին , խոկ շամփանեան պըլ պըլում էր սեղանի չորս կողմը և տեսնողին բերնէն ջրեր էր վաղեցնում : Բայց կէս օր կը լինի , մարդ չի երեւալ . մի ժամ , երկու ժամ կանց կենայ , ոչ ոք չի դալ : Լոռու Մելիքէնց Միքայէլն այն օրն առաւօտանց , իր Պատրիարքարան գնալու գիտաւորութիւնը կը յայտնէ , որն որ անմիջապէս կը հաղորդեն Պատրիարքարանին ընդունելութեան պատրաստութիւնը տեսնելու : Բայց յետոյ այդ այցելութեան յետ մնալու պատճառն է լինում Մատթէոս կաթողիկոսն : Սա լսելով թէ Մելիքեանցն իր առաջին այցելութիւնը գէօրգին պէտք է անէ , ասստիկ տաքանալով նեղանումէ , ու անմիջապէս մարդէ զրկում Տատեան Պօղոս բէդի տանը , այդ այցելութիւնը խափանելու : Տատեանց տանը խորհուրդ է լինում , խօսւում , վիճում է , Մելիքեանցը պնդում է թէ՝ ինքը նախ Պատրիարքին գնալու է սրարտական , իր դեսպանէն առած հրահանդին և իր քաղաքային սովորութեան համեմատ և ոչ կաթողիկոսին : Կաթողիկոսն ասում է թէ՝ ի՞նչպէս , ինձ համար եկողը , միթէ ուղիղո՞ն պէտք է երթայ : Ես մեծ եմ , կաթողիկոս եմ . վերջէն խնդիրը կախ է մնում . ոչ կաթողիկոսին և ոչ Պատրիարքին կերթամ , ասում է Մելիքեանցը , այսօր քիչ տենդ էլ ունիմ , գեղ պիտի առնեմ ևայն : Այսպէս , այն օրուայ լինելու այցելութիւնը կը խափանուի : Աղորմելի Հայոց Պատրիարքն , եպիսկոպոսք , վարդապետք , քահանայք , սարկաւագք , գպիտք , ժամհարք և ժամկոչք և ժողովուրդք կապասեն ու կապասեն արեւու տաքին , ոտքի վրայ , և կը տեսնեն , որ ոչ եկող կայ , ոչ գնացող : Վերեւը Պատրիարքարանը պատրաստուած ճաշն իրանք անոյշ կանեն , և այն միջոցին , որ շամբանեա գինին կը կօնծեն և խահվէն բերներին կը մօտեցնեն , փոխանակ լոռու Մելիքէնց Միքայէլին այցելութեան , կընդունին իրանց հանդիսումը Տատեան Պօղոս բէդի սպասաւորին , իրեւ լրատար այցելութեան խափանուելուն :

Յայտնի բան էր, որ ոչ ոք Մելիքեանցին խորհուրդ տալ չէր համարձակել. նա ինչպէս որ կամենար այնպէս կարող էր շարժել. միայն իր գետպանին աչքը կը նշմարէր, թէ ինչ հրահանդ պիտի տայ իրան. ուստի Մատթէոսի բողոքը բոլորովին պարապը դնաց : Նոյն այս այցելութիւնը լինելու օրուայ իրիկունը, գէորդ Պատրիարքը, փոխարէն իրան չեղած այցելութեան, վերէ կենում, անշուշտ կամ անհամբերութենէն կամ ասատիկ ցանկութենէն Լոռու Մելիքէնց Միքայէլին տեսնելու, կամ թէ արդէն, այնպէս մի կերպով տնօրինուած, ինքն է դալի այցելութիւն անում նրան, թերա Տատեան Պօղոս բէդի տանը, ուր զօրապետ հրաւիրակին բնակատեղին էր եղել : Նոյն իրիկուն գտնուում է և այն տեղ, իբրեւ թէ ժամադիր եղած լինէր և Յովհաննէս բէդ Տատեանը . Այցելութեան և տեսութեան ձեւերը վերջանալուց, և օտար հիւրերը մեկնելուց յետոյ, գէորդ Պատրիարքը, Միքայէլ Լոռու Մելիքեանցը, Յովհաննէս բէդ Տատեանը, ընդունելութեան սրահի մօտն եղած մի ուրիշ սենեկի մէջ են մոնում, դուները փակում և արգելք են դնում մարդներս մօտնելու : Մի ժամէն աւելի գաղտնի խորհուրդ են անում այն տեղ, որն որ յիրաւի ոչ ոք կարողանում է խմանալ կամ գուշակել թէ ի՞նչ մասին է այդ : Յետոյ մի փոքր ժամանակ էլ ընկերովի գէսուդէնէ խօսելուց յետոյ բաժանուում են : Այս տեսութենէն յետոյ է, որ Միքայէլ Լոռու Մելիքեանցը սերտ բարեկամութիւն է անում գէորդ Պատրիարքին հետ, նրա անձնական արժանաւորութիւնն էլ սաստիկ հաւանում, և իբրեւ ուստական կարգ, թէ առաջ պէտք է տեղական իշխանութեան անել այցելութիւն, որոշում է լինում նախ Պատրիարքին վճարել այցելութեան պարտքը և յետոյ կաթողիկոսին և այսպէս էլ լինում է . ուստի, ինչպէս արդէն պատմեցինք, նորէն գէորդ Պատրիարքը պատրաստութիւն է տեսնում, փառաւորապէս ընդունում է, ոչ միայն իր ցանկալի հիւրին, չայոց կաթողիկոսի հրաւիրակին, Ռուսայ կայսեր կողմէն, այլ իր անձնական սիրելի բարեկամին : 1859 թուի Համբարձման տօնի օրն էլ, Միքայէլ Լոռու Մելիքեանցն իր այցելութիւնն անում է Մատթէոս կաթողիկոսին : Սա Օրթագիւղ իր տանն էր բնակում, բայց այդ տունը

Հայ զօրապետին կայսեր հրաւիրակին ընդունելու յարմար չը դատուելով, Եռևուգիեանց աղայքն իրանց տունն են նուիրում այդ ընդունելութեան հանդէսը կատարելու . տանը մի յարկը փառաւոր զարդարում են, բազմոցների վրայ լահորի շալեր փուռում, սանդուխները նոյնպէս ընտիր կերպաներով ծածկում, անուշահոտ ծուխերով սենեակներն ու սրահները բուրում: Յակոբ Պատրիարքը, Սարգիս եպիսկոպոսը և ուրիշ եպիսկոպոսներ, վարդապետներ, աւագերէցներ, սարկաւագներ, գալիքներ ամենքն էլ հաւաքւում են, նոյնպէս աշխարհական կարգէն ամիրայներ, աղաներ ամենքն էլ այն տեղ ժողոված են լինում: Կէս օրուայ վրայ Մ. Լոռու Մելիքեանցն իր շքաղդեսոն հագած, իրան օգնական Միքայէլ Միանարեանցն էլ նմանապէս, և բարձրագոյն դռնէն իրան արուած թիկնապահը, Պողոս և Յովհաննէս բէգերն իրանց որդւոյնովը, Գէորգ Պատրիարքն իր քամակէն վարդապետներ ու սարկաւագներ ձգած, կառքերը նստած, ձիանների վրայ հեծած գալիս են Եռևուգիեանց տանը . այս բազմութեան խառնումէ նաեւ ժողովուրդն և ամենքը միասին մտնում են տանը սրահների և սենեակների մէջ, այնպէս որ ասեղ ձգելու տեղ չլինում: Մ. Լոռու Մելիքեանցն Ամենայն Հայոց կաթողիկոսի աջը համբուրելուց յետոյ, ոտքի վրայ կանդնած, յառաջուց պատրաստուած խօսք է ասում: Յառաջուց պատրաստուած ենք ասում, վասն զի Մ. Լոռու Մելիքեանցն հայերէն լեզուն չէր իմանում, իմացածն էլ թիվի լուս ժողովրային լեզուն էր, այն էլ լաւ չէր խօսում: իրան պէս են նաեւ Ռուսաստանի մէջ մեծամեծ պաշտօնների վրայ եղող Հայոց մեծ մասը: Բայց Մ. Միանարեանցն ոչ թէ միայն հայերէն լաւ էր խօսում, այլ նաեւ կարող էր և նախնեաց լեզուով գրել. ոս Մելիքեանցին երբեմն գրով, երբեմն բանով թարդման էր լինում, երբ հարկը պահանջում էր: Այս այցելութեան ժամանակն էլ այնպէս եղաւ: Լոռու Մելիքեանց Միքայէն ասաց թէ, « ինքը զրկուած է Պոլիս, մասնաւորապէս Ամենայն Ռուսաց » կայսեր և նրա տեղակալ կովկասու փոխարքայ իշխան Բարյ « եատինակիէն, որ Նորին վեհապատաւ թիւնը, այսինքն ամենայն Հայոց կաթողիկոսին, ամենայն յարդութեամբ և մե-

„ ծարսնքով հրաւիրէ ՚ի Ռուսաստան : Հայոց ազդն իրան  
 „ Ծայրագոյն Պատրիարք էր ընտրել (սուտ էր ասում) արդէն  
 „ ինքն էլ եկել էր Սմենողումած կայսեր տեղակալի հրամա-  
 „ նով, նրա երկրումը հրաւիրել իր աթոռի վրայ բազմելու ”  
 և այլ պանց նման խօսքեր : Հրաւիրակին խօսելուց յետոյ և  
 ամեն մարդ իր տեղը բազմելուց յետոյ, Մելիքէնց Միքայէլն  
 էլ իրան համար պատրաստուած աթոռի վրայ նատաւ, որն  
 որ կաթողիկոսի կատին էր : Գէորգ Պատրիարքը դէմուդէմ  
 բազմեցաւ, կաթողիկոսի մօտն էլ Յակոբ Պատրիարքը . իսկ  
 Պօղոս և Յովիաննէս բէդերն իրանց որդոցմովը և ուրիշ Օր-  
 թագիւղի երեւելի ազգայինք նոտել էին բազմայների վրայ .  
 իսկ սենեկին ու սրահին մէջ մի խուռն բազմութիւն ոտքի  
 վրայ կանդնած էին . Պ. Տիգրան Եռւսուֆեանը մի գրուած  
 ճառ կարդաց այդ հանդիսի մէջ, որն որ ուղղուած էր թէ  
 կաթողիկոսին և թէ հրաւիրակին, իբրեւ հանդիսականաց  
 կողմէն : Ճառը պրծնելուց յետոյ, վեր կացաւ Մատթէոսը  
 պատասխանելու այդ ճառին, որ ամենեւին հարկաւոր չէր,  
 բայց իր ատենաբանական համճարէն մի ճաշակ տալու հա-  
 մար անշուշտ լուռու Մելիքէնց Միքայէլին, սկսաւ բարձր  
 ճայնով պղաւել, « Աչք իմ, ազգ իմ », Գրիգոր Մագիստրոսի  
 խօսքն, որն որ չենք իմանում որ տեղէ ասել, բնաբան դնելով,  
 իր ազդին սիրեն իր աշքին նման, հասկացնել : Այս « Ազգ իմ  
 աչք իմ » բնաբանով քարոզը մինչեւ կջմիածին գնալը Մատ-  
 թէոս, ամեն տեղ ամեն եկեղեցիներումն թնդացուց . մինչեւ  
 որ ժողովրդեան մէջ « Ազգ իմ, աչք իմ քարոզն ո՞նց էր »  
 խօսքը հասարակաց եղաւ :

Այս այցելութեան հանդէսն էլ փառաւոր կերպով վեր-  
 ջայցաւ, բոլոր ազգայինք՝ չենք իմանում ինչ տեսակ հայրե-  
 նասիրութեան հրով վատուած և գրեթէ մոլի եղած սկսան  
 ամեն տեղ գովել ու գովել լուռու Մելիքէնց Միքայէլին,  
 չենք իմանում, ո՞ր հայկական փառքը, ո՞ր ազգասիրական  
 գործը, ո՞ր չնաշխարհիկ տաղանդը, և երբէք չունեցած  
 պաշտօններն ու չկատարած յաղթութիւնքը : Ահա՝ մեր ա-  
 սածին ապացոյց այս տեղ յառաջ կը բերենք մեր ընթեր-  
 ցողներին . այն ժամանակուայ Մասիս և Մեղու լրադիրների  
 ասածներն Մ. լուռու Մելիքէանցի համար, միեւնոյն ժամա-



դաւառին կուսակալութեանը մէջ գտնված բոլոր կանոնաւոր գունդերուն ընդհանուր վերատեսուն է :

“ Առաջ՝ կովկասու փոխարքայ մարաշախտ վորոնցով իշխանին բանակի օգնականն էր, և Որուսաստանի ասիական բանակին ընտրեալ զօրաց գլխաւորն ըլլալով, վերջին պատերազմին ժամանակը հայկազուն զօրապետ Բէհբուտով իշխանին հետ բոլոր կուիներուն մէջ գտնըլեցաւ ։ Կարսի պաշար ման ժամանակին ալ՝ Բէհբուտով իշխանը վրաստան դառնալէն ետքը, Որուսաց բանակին ընդհանուր հրամանատար Մուրավիէլ զօրապետը իւր քովը պահեց Լորիս Մելիքով զօրապետը, որ կարսի առնըլիէն մինչև վերատին ետ տրվիլը բոլոր նոյն դաւառին կուսակալութեան պաշտօնը վարեց :

“ Գերի ինկած Օսմանեան մեծ զօրապետներն ու պաշտօնակալներն ալ մեծ մարդասիրութիւն և պատիւ տեսած են իրմէ, և յատկապէս Քէրիմ փաշան անոր տունը հիւրընկալութիւն վայելած է :

“ Լորիս Մելիքով զօրապետը Որուսիոյ տէրութեան մէկ քանի մեծ պատուանշանները և Օսմանեան կայսերական Մէծ ճիտիէ պատուանշանը ստացած է և ինքը հազիւ երեսուն և երեք տարեկան կայ ։ Ասկէց կը հասկցի թէ այսչափ մեծ պաշտօններու և աստիճաններու համնելու համար որչափ անձնական արժանաւորութիւն և որչափ զինուորական քաջութիւն ցուցուցած է ։ Ինչու որ թէ Որուսաստանի և թէ Եւրոպիոյ ուրիշ կանոնաւոր տէրութեանց մէջ այս հասակի մարդ մը այսչափ բարձր աստիճաններու հասած ըլլալը խիստ հազուադիւտ և գժուարադէպ բան մը է :

“ Ասանկ արժանաւոր անձ մը մեր սիրելի աղդին զաւակն ըլլալը որչափ ուրախութեան և պարծանաց առիթ է մեզ՝ գժուարին է խօսքով բացատրել ։ ուստի բաւական կը համարինք միայն բարեմաղթել բոլորով սրտիւ որ այսպիսի հազուագիւտ անձանց կեանքն ու թիւը աւելնայ ազդերնուս մէջ :

“ Յիշեալ զօրապետին հետ եկող երիտասարդ զինուորական պաշտօնական ալ Մոսկայի Լազարեանց Ճեմարանին նախին աշակերտներէն և նոյն քաղաքի կայսերական օրէնքութիւններան համալսարանին առաջարկեալներէն (քանտիտա) էր, և հիմայ Որուսիոյ կայսեր եղբայր կոստանդին մեծ գուք-



Խնդրն անքուն՝ միտքն անհուն՝ աշխատաւոր սարդ,  
 Գէմքն չքեղ՝ հասակն՝ ձեղ՝ իշխանաց մէջ զարդ,  
 Գեղեցկատեմ՝ ծիծաղերեմ՝ մէկ նոր բացուած վարդ,  
 Մինչ չի խօսի՝ ով որ հասի՝ պատոկեր է, թէ մարդ,  
 Հայոց ազգի յոյն Դա է, Տէր, դու խնայէ:  
 Բերան պիտի, որ լու գովի Սորա արարքն,  
 Բնութիւնն, մարդկութիւնն, արբակաց վարքն,  
 Աստուած պահի՝ ոչք որ իցեն՝ Նորա սատարքն,  
 Զի վութապէս մուծցեն զնա դիւցաղնից շարքն,  
 Որ պարծենայ Հայաստանն, թէ որդիս Դա է:  
 Ո՛վ պաշտելի եւ տօնելի եօթն վիրաց պատկեր,  
 Ո՛վ անաշառ՝ բազմաչարչար Լուսաւորիչ մնր,  
 Ո՛վ հրաշալի եւ ոքանչելի Հայկաղն սուրբեր,  
 Դուք լերուք այս իշխանին հովանի եւ աէր,  
 Որ այժմ մեր ազգն յոյժ ճիշդ Սորան կու նայէ:  
 Ելյեադ, մի գովիլ այս իշխանին, որ միշտ մնայ լաւ,  
 Որին գովեցիր՝ յայտնի տեսար՝ վերջն լաւ չելաւ,  
 Որին ասեցիր՝ սա Յակոբն է, նա եղեւ Եսաւ,  
 Նրանց հիմն քայլայված էր, Սա է հաստատ նաւ,  
 Այս խօսքերըս ժամանակին ձեղ կը վկայէ:

1855 Հոկտեմբեր 12.

### Ի ԿԱՐՍ

“ Երիցս—երանեալ Ներսէս Ե. ի յաջորդը Տաճկաստանէն  
 ընտրըվելուն վրայօք, եթէ զմեղ բարեբաղդ համարելու եր-  
 կու պատճառ ունինք նէ՝ մէկը սա է որ, Հայկաղուն քաջ ու  
 առաքինի, Հայաստանի փառքը նորոգով, մեր նախնի դիւ-  
 յազանց նահատակութեանց ճշմարտութիւնն իր գործերով  
 հաստատող զօրապետի մը տեսութեանն արժանացանք, ու  
 քիչ մը միմիթարելցանք ” :

Այսպէս, Լոռու Մելիքէնց Միքայելի այցելութիւնքը,  
 Պատրիարքին, կաթողիկոսին, վեհափառ Սուլթանին, գես-  
 պաններին, ամիրաններին և ուրիշ նշանաւոր անձանց ու տես-  
 նելու արժանի տեղերին՝ խօսելու առարկայ էր տարել, ոչ  
 քայելն հետ ամուսնանալով օժիտ էր տարել իրան: Մելիքէնց Միքայելն, որ  
 կասուի Թիֆլիզուր Լորիս Մելիքով, զանազանուելու համար նցն անունը կրող  
 մի Վրացի զքապետէն, եր կնոջ երկրի անունը միացուցել էր իր ազգանունի  
 հետ, և ասում էր իրան Մ. Լոռու Մելիքէանց:

միայն մեր լրագրերին և ժողովրդին, այլ նաև Փօլսոյ այլեւ  
այլ ժողովուրդքն իրանց ուշադրութիւնն ու հետաքրքրու-  
թիւնը դարձուցել էին այս Ռուսահայ զօրապետին և Հայոց-  
մէ տեսած ընդունելութեան վրայ, մինչեւ որ Փօլսոյ Փրէս  
տ'Օրիան ֆրանսերէն լրագիրը մի ակնարկութիւն էր արել  
նրա հրաւիրակութեան մասին, Պօլիս Ռուսայ կառավարու-  
թենէն, Նմանեապէս Բարձրադոյն Դիան աչքն էլ թափանցեց  
այդ այցելութեանց և ընդունելութեանց նշանակութեան մէջ  
ինչպէս որ յետոյ պիտի տեսնենք: Բայց, մենք Օսմանեան  
տէրութեան Հայոց ժողովուրդք, ամենքս էլ եկեղեցական  
ու աշխարհական, ուսումնական և էֆէնտի ոչի՞նչ և ոչի՞նչ  
նշմարել և կասկածէլ կարող չեղանք դրա առաքելութեան  
նպատակին մէջ Ռուսաց կողմէն: միշտ այնպէս ճանաչեցինք  
ու գիտեցանք, որ դա՝ մի միայն և մասնաւորապէս եկած է  
Մատթէոսին ընդունելու և դէպի Ռուսիա առաջնորդելու ՚ի  
պատիւ Հայոց: Յիմար աչքակապութիւն մի տղէտ ժողովրդի  
համար, ինչպէս որ մենք ենք: Ընդհակառակին, դա՝ եկել  
էր Պօլիս մի ամենամեծ գործ կատարելու Ռուսաց տէրու-  
թեան օդակին համար, ՚ի վեսա Հայոց աղդին և եկեղեցւոյն,  
և ոչ իբրեւ Հայոց պատիւ և մեծարանք տալու: Երեսանց  
ճշմարիտ Հայու կերպարանք ցոյց կը տար ժողովրդին աչքը  
կապելու համար: այս ամիրային այն ամիրային հրաւէրը կըն-  
դունէր: հիւանդանոց, սւսումնարան տեսնելու կը գնար,  
աղդասէր աննենդ Հայոց այցելութիւնը կընդունէր, ո՛ւր որ  
հարկին էր՝ ոսկի կը տար, ո՛ւմ որ պէտք էր խօսք կը վատնէր,  
ծերունիների մօտ կրօնամոլ կը ձեւանար, պատանիների մօտ  
աղատամոլ: Երիտասարդների հետ հասարակօրէն կը վար-  
ուէր, հասակաւորների հետ ծանր կը ծախէր իրան: իսկ  
սրտանց, Հայոց աղդին ու եկեղեցւոյն նշանակութիւն չէր  
տալ, մեր կաթողիկոսին, Պատրիարքին, բողոք եպիսկոպոս-  
ներին, վարդապետներին, ամիրաներին ու էֆէնտիներին,  
յիմարների տեղ դրած նրանց քթին կը ծիծաղէր, մեր ծե-  
րունիների բարեպաշտութիւնն իրան համար սնապաշտութիւն  
էր, և երիտասարդների աղդասիրութիւնը տգիտական ցը-  
նորք: իսկ Հայոց ամբողջ աղդին կրօնական խղճին և աղդային  
զգացմունքին վրայ, զարհուրում ենք ասել, թքնում էր և

նրանք իր ձեռին գործի էր շինել իր անձի բարձրանալուն և սնավառութեան։ Մենք այսպիսի հայ մարդու տեղ կը դնենք Մելիքէնց Միքայելին, և Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութիւնն էլ ուրիշ դատաստան պիտի չանէ նրա վրայ, երբ նա յանդդնեցաւ Հայոց անտէր աղդին և նրա եկեղեցւոյն խարել ջանալ, Ռուսայ զոհելու, իր անձի փառքի համար։ Այդ զգացողութեամբ անշուշտ, այդ Ռուսերէն դրուած թուղթը դեսպանատնէն ստանումէ, Հայոց լեզուին թարդմանել է տալի, առում են, իր օդնական Մ. Միանարեանցին, առաջարկում գէորգ Պատրիարքին, Տատեանց և Պալեանց ամիրաներին, և թէ կարելի է հաւատալ Հոգեւոր և Գերագոյն ժողովներին, և առանձին խորհուրդ կազմել տալի երբեմն Տատեանց առաջ, մի կամ երկու անդամ Հայոց Պատրիարքանը; Հայոց աղդէն ու նրա եկեղեցւոյն ուխտէն ու նրա անուանովի կաթողիկոսէն թագուն, ու վերջապէս յաջողում ստորագրել տալի այդ դրուածքը երկու Պատրիարքների և Հոգեւոր ու Գերագոյն ժողովների անդամներին, ու գրաւնումն է դնում կշմիածնի Սինօդին տանելու։ Յետպ կը տեսնենք ինչ վախճան ունեցաւ այդ երտութիւնը։

Այս կոողութիւնը, այսօրուայ Պուրսայու առաջնորդ գեորգ Եպիսկոպոսն, որ այն ժամանակ կոստանդնուպոլաց Պատրիարք արքեպիսկոպոս Տաճկաստանի Հայոց ու Հոգեւոր և Գերագոյն ժողովների նախադաշնէր, այսպէս ունի պատմած մեղմ թէ յիրաւի այդ դրուածքի բնագիրը Ռուսերենէ թարդմանուած է լինում, և ամիրայքն իրան առաջարկել են մի աչքէ անցունել և ստորագրելով վաւերացունել, իրերեւ խնդիր և առաջարկութիւն Տաճկահայոց կողմէն, չենք իմանում ում, այսինքն Սինօդին, և թէ այդ դրուածքը, իր ասածին նայելով, սարսափելի բան է եղել. բայց ինքը շատ դիմագրութիւն է արել, տեսել է, որ անկարելի է խափան լինել այնքան ամիրայքը պնդում են եղել իր վրայ ընկնելով, որ վերջապէս հաճել է ինքն այն պայմանով, որ իր ուղածին պէս ուղղէ և մնասակար երեւցած յօդուածներն հանէ, ուստի ուղղելով և հանելով այդ յօդուածները ստորագրել ու վաւերացուցել է։ Բայց գժբաղդութեամբ այդ ուղղուած և մնասակար յօդուածները չնշուած թուղթն՝ որ

իր մօտը պահած ունի եղել, Պուրապյու հզդեհին առաջնորդարանին հետ միխիր է եղել։ Տարօրինակ անձն արդացընելու եղանակ։ Այս զրուցուածէն դուրս է դալի, որ խնդիր և Առաջարկութիւն գրուածքին երկրորդ հեղինակն ինքը դէորդ Պատրիարքն է եղել, վասն զի իր ուղղածն ու յօրինածն է այն իր ուղածին պէս։

Ահա, այս յետագայն է խնդիր և Առաջարկութիւն ասուած գրուածքն, որուն, մենք էլ ամեն մի յօդուածը մեր նկատողութեամբը կը պարզենք ընթերցողին համար։

ԽՆԴԻՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Ի ԳԻՄՍՅ ՀՈԴԵԿՈՐԱԿԱՆԱՅ ԵՒ ՃՈՂՈՎՐԴԻՆԱԿԱՆԱՅ ԲՆԱԿԵԼՈՅՑՍ Ի ՏՈՀԿԱՍՍԵՆ, ԱՌ ՍՈՒՐԲ ՏԻՒՆՀՈԴՈՍՆ ԱՐԱՐՈՍՏԵՍՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՑ ՍՈՒՐԲ ԷջՄԻԱԾՆԻ, ՈՐՊԵՍ ԶԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՄԵՐ ԸՆԴ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՑՆ, ՈՐ ԱՌ ԺԱՄԱՆԱԿ ՄԻ ԴԱԴԱՐ ԵՍԼ ԷՐ, ՍԿԻՉԲՆ ԱՌՅԵ ԵՒ ՇԱՐՈՒԵՍԱԿԵԼ ԱՆԲԱՆԴՄԵԶ ԵՒ ՍԵՐՏԱՆԱԼ, ՈՐՊԵՍ ԵՒ ԷՐՆ ԿԱՆԻԱԲԻ։

Երբէք Տաճկաստանի Հայոց հոգեւորականք և ժողովը դականք այդպիսի մի խնդիր և առաջարկութիւն չեն արել Ս. Էջմիածնի մայր Աթոռոյն սուրբ Ախոսին։ Այդ բանն աւրել են Գէորգ Պատրիարքն ու իր ժամանակուայ Հոգեւոր և Գերագոյն ժողովները, այսինքն տաս Եկեղեցականք և տաս աշխարհականք և մի արքեպիսկոպոս Պատրիարք, որոնք կարելի է բարձրագոյն գրան առջեւ ներկայացունելին իրանց ժամանակ բոլոր Տաճկաստանի Եկեղեցականքն ու ժողովրդականքը, բայց ոչ Արարատեան Մայր Աթոռին առջեւ։ Տաճկաստանի Եկեղեցականաց մէջ նշատմամբ Էջմիածնի, առաջին նշանակութիւն և ազդեցութիւն ունեցողն է Երուսաղեմի Հայոց Առորբ աեղեաց կառավարիչ վանահայր, Ասորւոց Երկրի և Եղիպատոսի վիճակների արքեպիսկոպոս և Հայոց Պատրիարք Երուսաղեմի իր վիճակաւոր և վանական միաբաններովն։ այդ անձն իր ստորագրութիւնը չունի այդպիսի մի ծանրակիշու խնդրի մէջ, իր փոխանորդը նշանակութիւն չունի ինդրի մէջ պարունակուած ծանր առաջարկութեան նայելով, Յետոյ կիլիկիոյ տան կաթողիկոսն իր վիճակաւոր առաջնորդներովն, նոյնպէս չկայ։ Դրամէ յետոյ բոլոր թուրքիոյ վիճակաւորներն իրանց իշխանաւորներովն կամ ժողո-

զըրդականներովը : Այս անձինքը ոչ թէ այդպիսի մի բան չեն արել, այլ իրանց մտքովն անդամ չեն անցուցել, այդբանի կարելիութիւնը : Ուստի Գէորգ Պատրիարքն ու Հոգեւոր և Գերագոյն ժողովներն ումմէ՞ կարող են լինում այդ իրաւունքն իրանք իրանց սեպհականել, իրանք իրանց էջմիածնի առջեւ ժողովուրդ և եկեղեցի ներկայացնելով բոլոր Թուրքիոց Հայոց կողմէն : Կը հարցունենք պատուելի Տէրոյէնցին ու Վարդանեանին, թէ Ղալաթիոյ Ընդհանուր ժողովով հաստատուած յանձնաժողովն է օրինաւոր, եթէ ոչ Գէորգ Պատրիարքի և Հոգեւոր ու Գերագոյն ժողովների շինած և վաւերացուցած խնդիրն ու առաջարկութիւնը . Ի՞նչպէս էր կարելի տաս եկեղեցական և տաս աշխարհական Պատրիարքի հետ միասին այսպիսի մի գլուածք յօրինելին այն ժամանակ առանց ազգի ամբողջութեան հաղորդելու, և այսօր չէ կարելի ազգային ընդհանուր հրապարակական ժողովով չորս գիտնական եկեղեցականով և չորս աշխարհականով յանձնաժողով կազմել քննողութիւն անելու համար և ոչ տնօրինութիւն : Տէրոյէնցին և Վարդանեանին խօսեցնող պատճառն՝ անպատճառ ոչ ազգասիրութիւնն է և ոչ ճշմարտասիրութիւնը, այլ ուրիշ բան :

## ՅՈՒՌԻԱԾ Ա.

Ընտրութիւն կաթողիկոս Հայրապետի նորոյ, յորժամ պարապիցէ աթոռն, լինիցի ըստ սահմանադրութեան, որ հաստատեցաւ առ հայրապետութեամբ Տ. Տ. Յովհաննու կարբեցւոյ:

Այս խնդիր և առաջարկութեան գրուածքին, հէնց իր վերնադրէն և առաջին յօդուածէն սկսած, մինչեւ վերջը խորամանկութեամբ, բանաարկութեամբ և շարակամութեամբ ու ամենէն զարհուրելի և սարսափելի, մի ազգ, մի եկեղեցի տապալելու և թշուառութեանց անդունդը գլորելու նպատակով գրուածէ : Այս առաջին յօդուածումն ընտրութեան խնդիրը մնում է այնպէս, ինչպէս որ առաջ, այսինքն Ռուսաց կայսրն է ընտրողը Հայաստանեայց եկեղեցւոց կաթողիկոս, ընթերցողէն կը խնդրէնք Ռուսաց նպաստաւոր կէտերն իր միտքը պահէ և նկատէ թէ կայ արդեօք մի յօդուած էլ որ Հայոց լինի նպաստաւոր, այս խնդրին և առաջարկութեան մէջ :

## ՅՈՒԹՈՒԱԾ Բ.

Սրբազնն Սիւնհոդոսն Սրբոյ Եջմիածնի ունիցի գերկոտասան անդամն, որոց վեցն իցէ 'ի Ռուսաստանէ ներկայացունել զուխտ Հայ եկեղեցւոյ Խուսաստանու, չորս 'ի Տաճկաստանէ ներկայացուցանել դուխտ Հայ եկեղեցւոյ եղելոց 'ի նմա, մի 'ի Պարսկաստանէ եւ միւս եւս 'ի գաղթելոց ազգայնոց յարեւմուտս եւ 'ի Մոլառվալաքիայ ի Սուչովայ եւ յայլ ուր ուր դասնիցին 'ի Կուսաւորչական աղբայնոց :

Հէնց այս Երկրորդին մէջ, մեր վերեն ասածին պատահեց յանք : Խնդիրը կամենում է Սինօդ կազմել 42 անդամներով, կէս միլիօն Հայոց տալիս է վեց ձայն, Երկու և կէս միլիօնին չորս ձայն, իսկ Ռուսանիայի և Պարսկաստանի հայոց մի մի ձայն : Պէտք է մի մարդ Գէորգ Պատրիարքին նման քաղաքագետ և աղղասէր լինի, որ այսպիսի կերպով մի մաս մարդուս աշքին մէջ մոնէ ու չտեսնայ : Խնջո՞ւ համար վեց անդամ պէտք է որ Ռուսահայոց կողմէն լինիւ . նրա համար, որ Ռուսայ ամենողը մած՝ Կայսրն նրանց կողմն է, և պէտք է մեր Հոգեւոր և Գերագոյն ժողովները հնազանդին նրան, մինչեւ անդամ իրանց ազգն ու եկեղեցին նրան զոհեն :

## ՅՈՒԹՈՒԱԾ Գ.

Սրբազնն Կաթողիկոսն արբոյ Եջմիածնի առաքեացէ զարժանաւոր Եկեղեցական ոք ի Կոստանդնուպոլիս փոխանորդ Արարատ եան Մայր աթոռոյ, լինել օգնական հոգեւոր կառավարութեան ազգայնոց ի Տաճկաստան, եւ անդամ հոգեւոր ժողովոյն Կոստանդնուպոլսոյ եւ յօդակապ սիրոյ եւ միջնորդ յարարերութեանց ընդ Կաթողիկոսն Մայր Աթոռոյ Սրբոյ Եջմիածնի եւ ընդ Պատրիարքական աթոռոյն Կոստանդնուպօլսոյ, խորչեալ ի յուզմանց անհամաձայնութեանց ընդ քաղաքական եւ ընդ Եկեղեցական իշխանութիւնս եւ ցորչափ է ի փոխանորդութեան Մայր Աթոռոյ արբոյ Եջմիածնի ի Կոստանդնուպոլիս, անհնարին լինիցի ի նմին պաշտամանէ իւրմէ բարձրանալ ի Պատրիարքութիւն Պօլսոյ, բայց նթէ յետ ելիցն ի փոխանորդութենէ եւ երթալ գաղթարելոյ իւրոյ ի Մայր Աթոռուն զամն երիս, այնուհետեւ մարթէ ազգին ընտրել եւ կարգել զնա Պատրիարք Կոստանդնուպոլսոյ :

Այս Խնդիրը, թէ Եջմիածնի կամ Ամենայն Հայոց կաթողիկոսն մի փոխանորդ ունենայ Պօլիս Պատրիարքի մօտ, իւ

րաւ է, շատ ժամանակ է երբեմն երբեմն յուղուած է և  
միշտ Պօլսոյ պատրիարքները մերժած են այդ : Ումանք կա-  
սեն, իրանց անկախ կացուցանելու համար, արքեպիսկոպո-  
սական իշխանութեան մէջ Ամենայն Հայոց կաթողիկոսէն, ո-  
մանք էլ կասեն ամբարտաւանութեան և փառասիրութեան  
համար Պօլսոյ պատրիարքների, Բայց այս վերջին ժամանակներն  
այսինքն քանի էջմիածին Ուղուաց տիրապետութեան տակն  
է, այդ խնդիրը շատ անդամ գրգռուել ու կրկնուել է :  
Միշտ Ուղուաց կառավարութիւնը կամեցել է, որ էջմիածին  
մի փոխանորդ ունենայ Պօլիս, ազգային խնդիրների մէջ խառ-  
նուող : Ներաէս միշտ այդ քանի գէմն է գրել, երբ դրա նպա-  
տակներին թափացել է . բայց ինչպէս տեսնում է այս տեղ  
ընթերցողը, հէնց վախճանում է թէ չէ՝ ներսէս, նորէն խնդի-  
րը զարժնում է, ու գալիս կանդ է առնում այդ փոխանոր-  
դի վրայ, և այս առաջարկութեան մէջն էլ, ինչպէս, որ կը  
կամենար Ուղուաց կառավարութիւնը, նոյնպէս կերպարանք  
է առնում : Փոխանորդն ոչ միայն կաթողիկոսի մի պաշտօ-  
նական գեսպանն է լինում, այլ Ցածկաստանի Հայոց Վարչու-  
թեան օդնական, Հոգեւոր ժողովոյն անդամ և մինչեւ անդամ  
Պատրիարք լինելու ասպարէզ է ունենում իր առջև : Թէ ի՞նչ  
նշանակութիւն կունենայ Ուղուաց ձեռին այդպիսի մի անձ  
Ցածկաստանի գործերի մէջ, մեղ արեւու նման յայտնի է,  
և դրանց էլ, գուցէ, որ խնդիրն ու առաջարկութիւնը ստո-  
րագրել են : Բայց մեր ընթերցողներին լաւ հասկացնելու հա-  
մար, մի փոքր բացատրենք այդ : Այդ մարդն անշուշտ մի  
արքեպիսկոպոս պիտի լինի և ի հարկէ մեծ թոշակով և փա-  
ռաւոր նշաններով, ու իր ազգեցութիւնը բանեցնելու հա-  
մար էլ գրապանները միշտ լիքը Ուղուի ոսկւով : Կը գոյ այդ  
մարդը Բերա, Ուղուաց գեսպանատան կտմին մի տուն կը բնա-  
կի, անդադար հազորդութիւն կունենայ Ուղուաց գեսպանի  
հետ և նրա ներդործութեամբ Պատրիարքը, Հոգեւոր և  
Գերագոյն ժողովներն իր մատներու մէջ իր ուղածին պէս կը  
խաղացնէ : Ինչպէս այսօր կատարում է այդ պաշտօնի նման  
մի բան, Բերայի սուրբ Երորդութիւն եկեղեցւոյն քարոզիչ և  
խառն ժողովոյ անդամ, Գալֆաեւան Խորէն վարդապէտն, որ  
քանի Այլաղէն բաժնուել ու Պօլիս է եկել, մի ոտքն ու ձե-

ու Ռուսաց դեսպանատանն է, ու միւս ոռքն ու ձեռը Հայոց Պատրիարքարան, և մեր Պատրիարքն իր ուղածին պէս այսինքն Ռուսաց դեսպանին, շարժել կը տայ, Պատրիարքը շարժելով, ի հարիէ ազգային վարչութիւնն էլ: Ռուսի կը տեսն նէիր, որ այդ վիտամնորդին այն ժամանակ, մեր ուսումնականներն ու լրագրավետներն ևայլն միշտ գովելով կը դուզէին, իսկ ուրիշ կարգի մարդիկ ամեն անդամ, որ հարկը կը պահանջէր նրամէն մի օդնութիւն յուսալու, նրա դուռը ձեռք կառնէին, կը գոտնէին նրամէն փող ուղղվերը՝ փող, նշան ուղղվները՝ նշան, հպատակութիւն ուղղվներն էլ հպատակութիւն: Խակ ինքը վիտամնորդը կատամար այս մարդ կանց կողմէն մի մեծ կուսակցութիւն, և նրանց ձեռքով, վասն զի իր ստեղծուածները պիտի լինէին, ոչ միայն Պօլոյ մէջ, այլ Տաճկատանի ամեն քաղաքներումը: Ռուսաց կառավարութիւնն ի՞նչ պիտի շահուէր սրանով. այն պիտի շահուէր, որ իր ազգեցութիւնը թուրքիոյ մէջ պիտի անցնէր Անդղիոյ և Ֆրանսիոյ ազգեցութենէն: Երբ Մատթէոսի ժամանակ այս խնդիրը նորէն բացուեցաւ Բարեատինսկիէն, Վեհապետնեան Գէորգ Եպիսկոպոսն ու Զալալեան Սարդիս Եպիսկոպոսը վեր կացան այդ պաշտօնն ընդունելու: Բայց արդէն այդ պաշտօնին նշանակութիւնը ժողովրդին յայտնի լինելով, աւելորդ է ասեմն որ, այդ վիտամնորդն և իր խրկողն անդադար հակառակութեանց պիտի պատահէին:

## ՅՈՒԹԻԱԾ Դ.

Խշամն է Սրբագան Կաթողիկոսն զումարել ազգային ընդհանուր ժողով, վասն վերանորոգ ութեան օրինաց եւ կանոնաց եւ աւանդութեանց սահմանելոց ինալմնի Սրբոց հարց եւ ժողովոց:

Այս յօդուածը բանսարկութեան Երկրորդ որոմն է: Հայաստանեայց Եկեղեցւոյ վերանորոգութիւնն են պահանջում, Գէորգ Եպիսկոպոսն Հոգեւոր և Գերադոյն ժողովներն, Մատթէոսի ձեռքով: Տէր ողորմեա՛, Տէ՛ր ողորմեա՛. և ի՞նչ տեսակ վերանորոգութիւն, այն անորոշ է, թէ իրա՞նց ուղածին պէս լինելու ժողովին, կամ թէ Ռուսաց կայսեր: Բացի սրամէն, յօդուածի նպատակն այն չէ, որ մեր Եկեղեցւոյ նախնական աւանդութիւնքն ու սովորութիւնքը վերահաստատելու

համար, կաթողիկոսին իշխան ու հեղինակ է անում ժողով գումարելու, վասն զի ի՞նչ օրէնք, և կանոն կարող է կաթողիկոսը հաստատել, քանի որ Պալաժէնիսան և Սինօդը կեցած են այն տեղ։ Այլ ժողովի, լինելն է որ նա ցանկանում է, որպէս զի այն ժողովավ, Ռուսաց կառավարութիւնն իր ուղածը կատարէ, թէ կաթողիկոսի ձեռքով և թէ բարձրաստիճան եկեղեցականներով, որոնք արդէն ամենքն էլ իր ձեռին ունէր ամեն տեղ։

## ՅՈՒԹՈՒԱԾ Ե.

Գերագոյն իշխանէ ի Հայաստանեաց եկեղեցւոջ ի գատել զանհնաղանդս եւ գմոլորեալս եւ զայնոսիկ, որք զանցանեն զօրինօք եւ զյամառեալս ի մոլորութեան եւ զորս ոչ անսան օրինաւոր եւ պիտապոսի իւրեանց եւ վճռոյ հոգեւորական ժողովոյն։

Այս հինգերորդ յօդուածը լուծումն է չորրորդ յօդուածին։ Այլէն գէորգ պատրիարքն ու Հոգեւոր և Գերագոյն ժողովները ինդրում և առաջարկում են Սինօդին, որ կաթողիկոսին իշխան հեղինակ կարգեն լինելու ժողովին և յետոյ դատաւոր Հայաստանեաց եկեղեցւոյ զաւակների խղճին ու հաւատին վրայ, երբ նրանք օրինաղանց, յամառուած, մնարուած և անհնաղանդ կը լինին իրանց եպիսկոպոսներին և այդ Մատթէոսի ձեռքով լինելու ժողովոյն վճիռներին։ Այս ի՞նչ է նշանակում, այս ի՞նչ բան է։ Ցայտնի բան է, որ այդ ժողովոյն մէջ առաջին վերանորոգութեան ինդիրը պիտի լինէր Քաղկեդոնի ժողովն ընդունիլը, ինչպէս որ միշտ առաջարկում էր նիկոզացոսն ընդունելու, և ներաէմն նրա քթին տալիս էր։ Պէտք էր, որ եթէ ժողովն ընդունած լինէր Քաղկեդոնիկութիւնը, ամեն Հայք էլ ընդունէին այն էլի, և եթէ չընդունէին, կաթողիկոսն պէտք էր դատէր և պատճէր նրանց։ Եւ կաթողիկոսն որմէ՞ էր ընդունում այդ հրահանգը ժողովը կազմելու և ժողովոյն անհնաղանդ եղողները պատժելու։ Գէսրդ Պատրիարքէն և Պօլսոյ Հոգեւոր և Գերագոյն ժողովներէ՞ն, եթէ՞ ոչ Ռուսաց կայսրմէն, կամ Տաճկաստանի ժողովրդականացմէ և հոգեւորականացմէ։ Ա՛ռ քեզ մի գժոխային աղդակործան մեքենայ, որն որ վերջին անդամ Պօլսոյ ազգայինք շինում են Հայոց եկեղեցին ու ազգը Հարդ ու վշտը անելու համար։ Ա՞ր է.ք Տէրոյէնց պատուելի և

Գաղփաեան Խորէն, ո՞ւր էք, վեր կացէք, քարոզ կարդացէք Եկեղեցիներումը, թէ աշխարհականները բան չունին խառնուելու մեր Եկեղեցւոյ գործերին մէջ, այլ պէտք է Գէորգին, Մատթէոսին, Փօլսոսին, և իրանց յանձնել Եկեղեցին ու ազգը կառավարելու իրաւունքը. որանք, պատպականութեան անճոռնի աստուածաբաններն իրանց պատգամատուեն են շինել Հայոց մէջ, մինը կասէ, առանց կաթողիկոսի ժողով չլինել. միւսը կասէ, կաթողիկոս լինի ու յետոյ օրէ նըսդրութիւն. ցանցառ ու յիմար սքրուստիքականութիւն, որու տակով իրանց շահերն ու օգուաներն են ծածկած, մինչդեռ 1859 թուին Գէորգ Պատրիարքն, Հոգեւոր և Գերադոյն ժողովներն օրէնքներ, հրահանդներ են տուն տալի, թէ Սինօդին և թէ կաթողիկոսին, առանց կաթողիկոսի և Սինօդի. և այս ամեն բանը կանէ Գէորգն յանուն Տաճկաստանի հոգեւորականաց և ժողովրդականաց. թէ բան չունի Պ. Զամուրծին թող գովէ ու գովէ Գէորգին, թէ Պուրսայում Հայոց Եկեղեցի է շինում, դպրոց է հաստատում. նա ազգաշին չէ ու չէ: Թող գինին կօնծէ ու կօնծէ և վեր կենաց պօռաց ու կանչէ խորէնն էլ ուղածին չափ Եկեղեցիսմն ու ամկին զարմացնելու համար թէ ինք ազգասէր է, ճշմարիտ Հայ է. մարդ չկայ հաւատացող, բայց մի քանի իմաստակներէ:

ՅՈՒՆԻՍ. Զ.

Ձեռնադրեսցէ յեպիսկոպոսութիւն, գորս Եկեղեցականք եւ ժողովրդականք իւրաքանչիւր վիճակի միականք հաճութեամբ եւ վկայութեամբ ընտրեալ մատուցանիցեն, իսկ զորս վասն վիճակաց Տաճկաստանի յետ ընդունելոյ վկայագրութիւն ի Պատրիարքէն կոստանդնուպոլիսոյ նոյնպէս եւ զորս մատուցանիցեն ի միաբանութենէ Սրբոյ Երուսաղեմի վկայական դրով. Պատրիարքի նոյն աթոռոյ ձեռնադրեսցէ եափսկոպոս :

Այս յօդուածի առաջին հաստուածը Պալամէնիայի տրամադրութեան հակառակ է, իսկ Տաճկաստանի և Երուսաղեմի համար ասածը նոր բան չէ, միշտ հնուց այնպէս էր: Այս յօդուածին խորհուրդն է Մատթէոսի կամովի առնելու բաներին յառաջուց գիմացն առնել, և Փօլսոյ Պատրիարքին և Հոգեւոր ու Գերադոյն ժողովներին և Երուսաղեմի Պատրիարքին բերներին անցյալ քսել:

## ՅՈՒՌՈՒՍԾ Է.

Բացարձակապէս իշխանէ օրհնել զարբարյու միւռոնն եւ տուաքել ընդ ամենայն եկեղեցիս Հայոց :

Այդ յօդուածն ոչինչ նշանակութիւն չունի . արդէն ամենայն Հայոց կաթողիկոսին է միայն պատկանում միւռոն օրհնելու իրաւոնքը և ոչ ուրիշին :

## ՅՈՒՌՈՒՍԾ Բ.

Սրբազն Կաթողիկան ունի իշխանութիւն պաշտպանելոյ եւ պահպանելոյ յիրաւոնս ազգային կալուածոյ եղելոյ ի Տաճկաստան եւ յամենայն տեղիս ուր գտանիցին, որպիսիք համարեալք են վանօրաքք, եկեղեցիք եւ գերեզմանաւոնք եւ այլն, հանդերձ նոցին սեպհական ստացուածովք առանց միջամուխ գոլոյ վերակացութեան նոցին եւ տուանց փոխադրելոյ իրիք ի նոցունց ըստ համոյս :

Ի հարկէ, նա է հոգեւոր տէր ամեն Հայոց ո՞ւր որ կը դանուին, և նրանց եկեղեցեաց, վանօրէց, գերեզմանաւանց և այլ հոգեւոր տեղեաց, և նրան է պատկանում պաշտպաննել օտարների յափշտակութենէն . սակայն ո՞ւր էր թէ այդ իրաւոնքն վայելէր նա . ամեն Հայոց հոգեւոր կալուածոյ համար, ո՞ւր տեղ և ո՞ր աերութեան մէջ որ գտնւում են, նոյն խակ ուստական երկրին մէջ, և երկրէն դուրս էլ առանց ուստական կառավարութեան խառնուելուն : Բայց այս տեղ այդ օրինաւոր պայմանով գրուած չէ այդ յօդուածն, այլ Սինօդի, Պալամէնիսայի, Պօլսոյ լինելու փոխանորդի միջամտութեամբն է որ այդ կալուածները պիտի պաշտպանուեին : Կարծես թէ Պօլսոյ արքեպիսկոպոսն ու Երուսաղեմի արքեպիսկոպոսն, Կաթողիկոսի փոխանորդները չլինէին, կամ թէ Հայոց ազգն նրանց, Եպիսկոպոսապետէն յետոյ արքեպիսկոպոս չճանաչէր, որպէս զի պէտք լինի ուրիշ մի անկախ փոխանորդէ :

## ՅՈՒՌՈՒՍԾ Բ.

Երազմաց ժամանակաց առ աստանդական թափառելոյ ազդի մերում ի զանագան տեղիս եւ յիշխանութիւնս չեղեւ գումարունն ազգային ընդհանուր ժողովոյ, վասն որպիս սրբազն Կաթողիկոսն ըստ չորրորդ յօդուածով ծանուցեալ կարողութեան իւրոյ յետ ոչ բաղում ժամանակաց գումարեայէ ընդհանուր ազգային ժողով ի վիճակաւոր եպիսկոպոսաց ի վարդապետաց ի վանահարց, յու սում-

նական կղերց եւ յիշխանաւորաց ամենայն վիճակաց Ռուսաստանի Տաճկաստանի եւ Պարսկաստանի եւ այլոց տեղեաց , որպէս զի ի նմին ժողովի լինքնին առեալ զարդի վիճակ եւ զհանգամանն եկեղեցեաց ազգիս վիաջանեալն վերածեցն յէ-ը բներ ըլակաւալոն լուսացն և վներեալոն ուղղեցն ըստ առաքելական եւ հայրապետական կանոնաց եւ կարգաց եկեղեցեաց եւ հրատարակել ըստ ամենայն Հայո , որպէս զի որք զանցանիցեն այնուհետեւ զնոքօք , որու ժողովն հաստատեաց եւ հրատարակեաց , անկյլն ընդ պատմովք գտատպարտութեան , նոյնպէս եւ բազմաց գործոց ազգայնոց ցրուելոց ընդ զանազան կողմունս , որոց են որ առ նուազութեան խզճի եւ են որ առ անդիաւութեան կամ ի պատրելոյ կամ ի չար օրինակաց անցեալ իցեն ըստ օրէնս եւ ընդ կանոնս եւ զազգն թողեալ ընդ պարտեօք օրինազանցութեան եւ յանցաւոր եւ պակասաւոր , հոգ տարցէ ժողովն ի քաւութիւն անցելոցն ի համագարաւութիւն խզճի բովանդակ աղքիս :

Ահա այս յօդուածումն է բովանդակուած ամեն խորաման կութիւն և բանսարկութիւն : Գէորգ և Յակոբ Պատրիարք ները տաս եկեղեցականով և տաս աշխարհականով իմադրում են Սինօդէն , որ ամենայն Հայոց կաթողիկոսն Հայաստանեաց մինչև այսօր սուրբ և առաքելական եկեղեցին , նորէն բովի մէջ գնել և լուծել և նրա մէջէն աւելըրդներն հանել և պակասները լրացնել , նոյնպէս և նրա մէջ գտնուող մոլարները չնչել , մի խօսքով խղճաքննութեան ատեան հաստատել և այդ լինելու ժողովի անհնազանդներին առկով չուանով կալս անել հրով այրել և եկեղեցիէն դուրս հանել : Տես նկատողութիւն Ռուսահայոց , երես 237 :

## ՅՈՒՈՒԵԾ Ժ .

Սրբազան կաթողիկոսն հաստատեացէ ի միում մօտաւոր մենաստանեաց սրբոյ Մայր Աթոռոյն Էջմիածնի բարձրագոյն ուսումնարան վասն ժառանգաւորութեան եկեղեցւոյ զի ի վարժելոցն ի նման յարիցեն բանիբուն եկեղեցականք :

Այդ բանի չլինելը շատ աւելի լաւ է քան թէ լինելը , որովհետեւ արդէն եղածներին գտնուած վիճակէն կարող ենք գուշակել թէ այդ բարձրագոյն ուսումնարանն էլ ի՞նչ կարող է լինել ժամանակով , Լազարեանց , Աղապապեանց , Խալիպեանց ուսումնարաններն այսօր Ռուսականութիւնը , այն է ի՞նչ որ Հայոց : Թէ ի՞նչ է Ռուսականութիւնը , այն է ի՞նչ որ Հայոց հակոտնեայն է :

Ա.ՐՏՈՆՈՒԹԻՒՆՔ ՊԱՏՐԻԱՐՔԱՅ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ  
ԵՒ ԿՈՍՏԱՆԴՎՈՂՈԼՍՈՅ

ՅՈՒՌԻԱԾ Ա.

Ըսդհանրական կաթողիկոսն սրբոյ Եջմիածնի ծանիցէ զպատրիարքն սրբոյ Երուսաղեմի ծայրագոյն Աթքեպիսկոպոս և Պատրիարք և նսխապատիւ գահերէց Աթոռոյ սրբոյ Յակոբեանց Առաքելոցն ընդ գերագոյն հոգեւոր իշխանութեամբ Մայր Աթոռոյ սրբոյ Եջմիածնի :

Այդ նոր բան չէ, միշտ այնպէս է եղած : Բայց թէ այստեղ ի՞նչ նպատակով նորէն յիշւում է այդ, նրա համար է, որ ոչ կաթողիկոսն խորչեցնէ նրան և ոչ Երուսաղեմի Պատրիարքը մերժէ կաթողիկոսի վճիռներն ու հրամանները, այլ համաձայն լինին լինելու ժողովի տալու վճիռներին : Ընդհակառակն կաթողիկոսն, ինչ որ հաստատուած է մեր եկեղեցիումը և ոչ մի կէտ անգամ չէ կարող ինքն իրմէն տեղին շարժել, և թէ այդպէս մի յիմար հեղինակութիւն անէ, վերջին հայն անգամ բողոքելու իրաւունք ունի, ուր մնաց մի արքեպիսկոպոս պատրիարք, վանահայր և այլն :

ՅՈՒՌԻԱԾ Բ.

Ըսդհանրական կաթողիկոսն սրբոյ Եջմիածնի ծանիցէ զՊատրիարքն կոստանդնուպօլուոյ ծայրագոյն արքեպիսկոպոս և Պատրիարք ամենայն Հայոց բնակելոց ի Տաճկաստան ընդ գերագահ իշխանութեամբ Մայր աթոռոյ սրբոյ Եջմիածնի և ունել իշխանութիւն կարգելոյ եւ յետս Կոչելոյ զառաջնորդս վիճակաց եղելոց ի Տաճկաստան խորհրդակցութեամբ հոգեւոր ժողովոյն ընդ իւրեւ եղելոյ :

Այս յօդուածն էլ վերեւոյն նման մի բան է :

ՅՈՒՌԻԱԾ Գ.

Կաթողիկոսունք Սոյ եւ Աղթամարայ ի նստել յաթոռ Հայրապետութեան իւրեանց, նոյնպէս եւ Պատրիարքունք սրբոյ Երուսաղեմի եւ Կոստանդնուպօլուոյ ընարել իւրեանց յուխտէ Եկեղեցւոյ եւ ի ժողովրդենէ եւ ի նստել յաթոռ յատուկ գրով յորում ըստորագրեալ իցէ եւ ուխտ եկեղեցւոյն մատուցեն դհաւաստիս մեծարանաց առ մայր Աթոռն սրբոյ Եջմիածնի : Զորեքին Աթոռքս այսոքիկ խորհրդով հոգեւոր ժողովոյ իւրեանց զամենայն իրողութիւնն որ վերաբերին ի հոգեւորս կարեն անօրինել եւ կարգադրել իւրաքան-

Հեւր իւրեանց վիճակի , իսկ ի բռնի եւ ի գէպս դժուարին ինդրից փութայցին խորհուրդ հարցանել ի սուրբ սիւնհողոսէ Մայր Առողջոյ սրբոյ եջմիածնի :

Այս էլլոկ ձեւէ , և այդ աթոռներն էլ էջմիածնի սինօդին և Պօլսումն լինելու փոխանորդին ներգործութեան ներքեւ ձգել է : Զարմանալի ուռկան , ծայրը կայսեր ձեռին , և տարածումն է սինօդով կաթողիկոսին վրայ , կաթողիկոսով պատրիարքներին , պատրիարքներով ամեն առաջնորդներին և վանահարց վրայ :

## ՅՈՒՌԻԱԾ Դ .

Իւրաքանչիւր վիճակաւոր եպիսկոպոսունք Հայոց բնակելոց ի տաճկաստան վասն ամենայն հոգեւորական եւ քաղաքական ինդրոց պարագն դիմել ի կեդրոն իւրեանց ի պատրիարքական աթոռ Հայոց ի կոստանդնուպոլիս , ունելով իրաւունս յորժամ հարկաւորիցի բողոքել 'ի մայր աթոռն սրբոյ էջմիածնի սակայն ի սուրբ աթոռն յորժամ բողոք ինչ հասցէ ի վիճակէ իմեքէ , զպատճէն բողոքին արձանագրեալ յիւրումն դիւնանի կանխաւ վասն նոյն իրաց ինդրեացէ եւ ընկացի ծանօթութիւն ի Պատրիարքարանէ եւ ապա մատիցէ տալ զարգանին վճիռ :

Այդ բաները լաւ կը լինէին , թէ որ սինօդը ջնջուէր , Պալաժէնիան վերանար և փոխանորդի տեղ Պօլսոյ արքեպիսկոպոս Պատրիարքը ճանաչուէր կաթողիկոսի փոխանորդ , ինչպէս որ է իսկօրէն . ուստի քանի որ այդ վերեն յիշուածները կան իրանց տեղը , այդ կարգադրութիւնքն աւելորդ են , որոգայթ են , բանսարկութիւն անել է Տաճկաստանի առաջնորդներն անհնազանդն անել է իրաց արքեպիսկոպոս Պատրիարքին և այլ դրանցմէ յառաջ գալու աղետալի հետեւանքների աղբւր :

## ՅՈՒՌԻԱԾ Ե .

Ամենայն գանդատք որք լինիցին ի հոգեւորական մասին զկաթողիկոսաց Սայ եւ Աղթամարայ եւ զՊատրիարքարանէ սրբոյ երուսաղեմի , կամ զմիոյ ումեքէ յառաջնորդաց Տաճկաստանի յառաջարկեացեն նախ հոգեւոր ժողովոյն կոստանդնուպոլսոյ , ուր եւ տարցի փոյթ ամենայն ինսամով վճարել զիրմն , բայց եթէ ինդրիցն ոչ լուծանիցի ի ժողովի անդ իրաւունս ունիցին որք զբողոք հարին , այնուեւտեւ բողոքել յիւրում դիւնանի զպատճէն ամբաստա-

նութեան իմոգրեսցէ ծանօթութիւն ի Պատրիարքարանէ կոստանդնուպոլսոյ վասն նմին իրաց եւ ընկալեալ օրինաւոր կերպիւ ի գործ դիցէ զպատշաճն եւ զարժանաւորն :

Այս յօդուածը կրկնութիւն է նախընթացին և բուն իսկ մեկնութիւնը : Մինչև այսօր չէ լոււած մեր Հայոց Եկեղեցականաց մէջ, որ մի եպիսկոպոս կամ մի առաջնորդ, վեր կենաց կամ Պօլսոյ Պատրիարքէն կամ Երուսաղեմի Պատրիարքէն բողոք բառնայ գանգատաւոր լինի կաթողիկոսին և իր առաջնորդին ու Պատրիարքին մէջ վէճ ու կռիւ բաց անէ : Բայց այդ խնդրին առաջարկութեան գործադրութենէն յետոյ կաթողիկոսը, սինօդը և Պալաժէնիան և փոխանորդը և ամենէն զօրաւորը Ռուսաց կառավարութիւնը միջամնուխ պէտք է լինին այդբաների մէջ սինօդումն եղած Պրօկուրօրի ձեռքովլ։ Առ քեզ խորվութիւն երկարաւակութիւն սերմանելու մի ամենաճարտար աղբիւր, որուն ակն միշտ դանւում է Ռուսաց կառավարութենումը և իր գործակաների ձեռքովլ, ինչպէս եղելէ Պալաժէնիայի հաստատութեան ժամանակ, վասիլ Պէհապուտեանցի, և այս անգամ էլ Միքայէլ Մէկիքեանցի, Հայոց աղբի մէջ։ Թէ ի՞նչպէս է կառավարում Սինօդը Հայաստանեաց եկեղեցին Ռուսաստանեաց մէջ, մենք մեր աչքովն ենք տեսել։ Թէ ի՞նչպէս էլ պիտի կառավարէր այդ գըրութեամբ, մենք այժմէն կարող ենք գուշակել։ Այդ միջոցներն ուրիշ բան չեն, բայց միայն բոլոր մեր աղգայնոց ազատական զգացմունքների աղբիւրները ցամաքեցնել, աղդային եռանդը սառեցնել, մէկին մէկալին աղանդաւոր, անհաւատամ դուրս բերել, քանի որ կը շեղին կամ անհաւան կը լինին այդ բաներին, Դալրոցները ենթարկել սինօդի իշխանութեան տակ, դաստիարակութիւնը կայսերական, աստուածակետական անել, մի կայսեր գաղափարը տեսակ տեսակ աւարկացներով և օրինակներով թուրքիոյ Հայոց ժողովրդի երեւակայութեան մէջ դրոշմել, ընտանեցնել։ կայսրն ու կաթողիկոսն իրարու հետ շարժող, համախօս և համամիտ կարծել տալ և այլ սրանց նման մաքիաւելական բաներ, որոնք փառք Աստուծոյ ամենքն էլ օդումը ցնդուեցան ճշմարիտ Հայոց ձեռքովլ Ռուսաց կառավարեկամ Հայոց փորացաւի համար :

## ՅՈՒՊԻԱԾ Զ.

Սրբազնն Պատրիարքն սրբոյ Երուսաղեմի յառահճին եւ ի պատշաճաւոր ուրեք արտաքոյ քան զմեծահռչակ վանս սրբոյ Յակոբեանց հստափեցէ բարձրագոյն ուսումնարան վանս ժառանգաւորութեան Եկեղեցւոյ :

Զայտոսիկ ամենայն ապաքէն ի դիր առեալ միաբանութեամբ եւ մատուցեալ սրբոյ Սիւնօդի Սրբարատեան Մայր Աթոռոյ մերոյ Սրբոյ Եջմիածնի, կամիսք զի պատճէն այսր թղթոյ նոյնութեամբ յերկուս յայլ եւ օրինակն զրեալ եւ վաւերացուցեալ մինն առ ի մէնջ մատուցեալ իսկագիրն է պահեսցի ի դիւանի անդ սրբոյ Աթոռոյն, իսկ զմացեալք երկոցոն պատճէնից այսր սահմանադրութեան զվաւերացուցեալս ի սրբոյ աթոռոյս, զմինն առաքել ի Կոստանդնուպոլիս զի պահեսցի անկորուստ ի դիւան Պատրիարքարանին եւ զմիւան ի սուրբ Երուսաղէմ Աթոռ սրբոյ Յակոբեանց զի պահեսցի եւ երկաքանչիւր Պատրիարքունք անմոռաց յուշի ունիւցն թէ ընդ որովք պարտեօք իցեն ի գիտել զիրաւունս Սրբազնն Կաթողիկոսի ամենայն Հայոց եւ ի կատարել զամենացն գործ հոգեւոր իշխանութեան յանձն եղելոց ինքեան եւ ըստ այնմ միտ դիւցեն վարել:

Անստերիւր պահպանութիւն գրելոցս ի ամա կարեւոր ճանաչեցի ի պահպանութիւն արտօնութեանց սրբազնն հայրապետի Հայկաղեան աղջիս ի նոգեւոր տեսչութիւն նորին եւ ի գործադրութիւն եւ ի պահպանութիւն սահմանելոցս ծանիցի գերագոյն հսկողութիւն նորա ի վերայ աղջին որովք եւ աղջն ծանիցէ զնագերագոյն հայրապետ Հայրապետ Հայտաստանեացց Եկեղեցւոյ եւ արժանաւոր յաջորդ սրբոց առաքելոցն Թագէոսի եւ Բարթողիմէոսի եւ սրբոյ Դիրիկորի Լուսաւորչին :

Իսկ եթէ ոք կամ առ շահամիրութեան կամ առ անձնաղիւրի, կամ առ ակնածութեան իշխանութեան իրիք անհոգացեալ ի միում ի միք յայսցանէ բերիցի ի նուազեցուցանել զառ ի սրբոյ հարց անտի մերոյ ստացեալ եւ պահեալ արտօնութիւնն եւ անկախութիւնն եւ պատճառ զացի իւրով անհոգութեամբ վատթարելոյ աղջիս, զայնպիսին ոչ ընդունի եւ ոչ ճանաչէ աղջն իրեւ արժանաւոր յաջորդ Լուսաւորչեան Աթոռոյ ընդհանուր հայրապետութեան աղջիս : Սակայն եւ ոչ այսու ցրտանայ ինչ եւ հեռանայ ի դրկաց սուրբ Աթոռոյն, զոր միշտ մայր իւր ճանաչէ, այլ համարի զայն առ ժամանիրեւ աթոռ թափուր առանց արժանաւոր գահակալի եւ խնդրէ յազօթո իւր յԱստուծոյ չնորհել Եկեղեցւոյ իւրում զոր ապրեցոյց արեամբ եւ պայծառացոյց առաքելական բանիւք սրբոյ հօրն մերոյ

Գրիգորի Լուսաւորչին, ժառանգ արժանի նմին ի ակոչութիւն եւ  
ի մատակարարութիւն հոգեւոր պիտոյից Աղջիս :

Յամի Փրկչին 1859 Մայիս 8 ի Կոստանդնուպոլիս :

Նախին Պատրիարք Կոստանդնուպոլսոյ Յակոբ Եպիսկոպոս :

Ն. Սարքիս Եպիսկոպոս Անդամ Հոգեւոր ժողովյան :

Ն. Յովհաննէս վարդապետ Սէլիևան Անդամ Հոգեւոր ժողովյան :

Արքոյ Երանակէմի Քոհանուրդ Ն. Խանճակ վարդապետ :

Պատրիարքական Քոհանուրդ Յարութիւն վարդապետ Պօղոսեան անդամ Հոգեւոր ժողովյան :

Ն. Յովհաննէս վարդապետ անդամ Հոգեւոր ժողովյան :

Ն. Երեմիա Դահանայ անդամ Հոգեւոր ժողովյան :

Իւսիկարարու Սուրբ Խաչ Եկեղեցոյ Ն. Տէր Յովհաննէս Դահանայ անդամ Հոգեւոր ժողովյան :

Ն. Տէր Յահան Դահանայ Մայր Եկեղեցոյ անդամ Հոգեւոր ժողովյան :

Ն. Տէր Արքարքական Դահանայ անդամ Հոգեւոր ժողովյան :

Անդամ Արքային Գերադայն ժողովը

Կանք

Սարբարքութիւն Հոգեւոր ժողովյան Թերոյ և իբն-  
ոյ Գերադայն ժողովը արքի սուրբութեամբն  
վկայելով շայ աղքային ինուրի և յաւաղակիւ-  
թիւն սորբարքութիւնով և ինուր Թերոյ վաւերա-  
ցուցանեած 1859 ամ Մայիս 44

Պատրիարք Կոստանդնուպոլսոյ

Գերք Արքարքական

Կանք

Այս վեցերորդ և վերջին յօդուածին մէջ խնդիրն ու ա-  
ռաջարկութիւնը, իր կերպարանքն ու խօսուածքը փոխում  
է և Սահմանադրութիւն է կոչում, և փոխանակ առաջար-  
կելու Սինօդին, գրեթէ հրամայում է առանց նկատողու-  
թեան ընդունելու իր օրէնքները, Սինօդին և Սինօդով ա-  
մենայն Հայոց կաթողիկոսին և իրանց ստորագրութեամբ վա-  
ւերացնելով, պատճէններն իրանց մօտ պահելէն յետոյ էլ  
իրանց զբկել, որ ըստ այնմ վարուին այսուհետեւ կաթողի-  
կոսները, պատրիարքները, առաջնորդները, մի խօսքով ա-  
մեն եկեղեցական և աշխարհական հայ մարդ :

Խակ երկրորդ հատուածին մէջ մի յայտնի սպառնանք է  
անում Սինօդին և Ամենայն Հայոց կաթողիկոսին, պարտա-

ւորեցնելու համար այս ինդիր և առաջարկութիւնն ՚ի գործ դնելու, ապա թէ ոչ, ասում է Հայոց ազդը, չճանաչել կա թողիկոսին իբրեւ գերագոյն հայրապետ Հայաստանեայց եւ կեղեցւոյ, և արժանաւոր յաջորդ առաքելոց թագեպոի և Բարթողիմէոսի և Գրիգորի լուսաւորչի։ Հէնց կարծես այս յօդուածներէն կախուած լինէր Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը։ Բայց այս առուածքն անուղղակի մի ակնարկութիւնն է և թագուն սպառնանք Մատթէոսին, Գէորգի կողմէն։ Այս, արտօնութիւնք պատրիարքաց վերնագրով յօդուածները բոլորվին տարբերուամ են թէ լեզուով, թէ խորհրդով և թէ ուղղութեամբ այն խնդրի և առաջարկութեան յօդուածներէն։ յայտնի երեւում է, որ այլեւայլ գրիչ, այլ եւայլ հեղինակութիւն և այլեւայլ խորհուրդ այդ գրուածքի մէջ սպառել են։ Մելիքէնց Միքայէլն իրանն է քշել, Գէորգ Պատրիարքն իրանը, և միամիտ վարդապետներն ու քահանայներն իրանցը։ Բայց այս վերջնոցն ինդրի սկզբնական ուղղութեան նշանակութիւնը ոչ մի կերպով վտիսել չեն կարող եղել։ Վերջին հատուածին մէջ աւելի սաստիկ կերպով յայտնուում է Գէորգ Պատրիարքին և Հոգեւոր ու գերագոյն ժողովների անվատահութիւնը, Մատթէոսի վարելու կաթողիկոսութեան վրայ։ մինչեւ անդամ, նրան իբրեւ կաթողիկոս անդամ ճանաչելու մի սպառնանք են անում, եթէ երբէք յիշուած սպայնանները չկատարէ։ Միթէ այսքան իրաւունք ունէի՞ն այն ժամանակ Պօլսոյ Պատրիարքն ու Հոգեւոր և գերագոյն ժողովներն, որ օրէնք տուն տային, և հրաման անէին ամենայն Հայոց կաթողիկոսին, չնայելով, որ նա Որուսաց կայսեր տիրապետութեան տակն էր, և նրամէն արդէն եկեղեցւոյ վարչութեան համար մի սահմանադրութիւն (Փալաթէնիա) ստացած, և այսօր Պօլսոյ ազգային ընդհանուր ժողովն հրապարակով կարող չլինիր իրաւունք ունենալ և ոչ քննութեան տակ առնել կաթողիկոսական վիճակն։ զարմանալիք փոփոխութիւն իրերու եօթ տարուայ միջոցումը, ի՞նչ պէտք է ասել այս խնդիրն, առաջարկութիւնն ու արտօնութիւնք մտածող և յօրինող Հայոց, որոնցմէ շատերը գեռայսօր կենդանի են։ Միթէ կարելի՞ է ասել, թէ որանք ազգ սիրող, եկեղեցի պահպանող, Հայոց ազգային և բարոյական

լուսաւորութեամն վերազարգացնողներն էին ու են , ո՛չ ամեւնեւին . սրանց ամենք էլ ըստ մեղ , անուսումն , միամիտ , շահամնդիր անձինք են եղել , որք մի միայն ազգի դլուխն անց կենալ են ցանկացել իրանց կեանքումը առանց ազգը սիրելու , վասն զի ո՛վ որ իր ազգն ու եկեղեցին կը սիրէ , նախ իր ազգին ու եկեղեցւոյն ճանաշելու ուստումն ու դիտութիւնը կունենայ , և յետոյ կը համարձակի ազգը կառավարելու յանձնառու լինել . թող լսեն այս խօսքերը նրանք , որ ոչ Հայոց լեզուն , ոչ պատմութիւնը , ոչ եկեղեցին , ոչ երկիրը , ոչ բարքն ու վարքը , մի խօսքով Հայոց ոչինչ մի բանը չեն գիտել , այլ մի միայն կամ փողի տէր , կամ մի պաշտօնի վրայ , կամ եպիսկոպոս , կամ վարդապետ լինելով , վեր կը կենան ժողովական կը լինին , և այսպէս թղթեր կսորագրեն , այսպէս յօդուածներ կը յօրինեն : Մենք ապահով ենք , որ այս թուղթն սառագրողների մեծ մասը թէ եկեղեցական և թէ աշխարհական , ամենեւին հասկացած չէ եղել թէ ինչ բանի համար է ձեռք քաշում , այլ իրանց արքեպիսկոպոսներէն սիրու առնելով , ստիպուած են եղել ստորագրել , և հազիւ թէ մի անդամ կարդացած լինէին . բայց օրերով էլ կարդային՝ ոչինչ հասկանալու կարող չէին : Խոկ գերագոյն ժողովի անդամները իրանց կնիքը դնելով միայն բաւական են համարել իրեւ Տաճկաստանի ժողովրդականք ներկայանալ ինդրին մէջ . այդ էլ կարելի է մի խարեբայութիւն լինի , և այդ անդամներն ամենեւին տեղեկութիւն անդամ չունենան այս խնդրի մասին , և այդ կնիքը գէորդի ձեռին կամ մի քանի ամիրայի հաւանութեամք դրոշմուած լինի թղթին վրայ : Խոկ Մատթէոսին՝ ոչ իրանց ժողովումն ընդունեցան , ոչ այս խնդրի և առաջարկութիւնը ցոյց տուին և ոչ ամենափոքր խորհրդ հաղորդեցին նրան . էր մի անդամ նրան էլ չյայտնեցին այդ բանը , և նրամէն էլ մի վաւերացումն կամ խոստմունք չառին իրանց առաջարկութիւնը կատարելու : Խնջու այդ թուղթը տանողն ինքը Մելիքէնց Միքայէլն եղաւ և ոչ Մակարը կամ ինքը կաթողիկոսը : Մակարն այդ թղթերը Մելիքէնց Միքայէլէն թիֆլիզումն է ստանում Սինօդին յանձնելու : Ի՞նչ կը նշանակէ այս ստորերկրեայ գործողութիւնը , եթէ մի վատ և վսասակար բան չկար մէջ տեղ ,

ինչո՞ւ օրագրերը չխօսեցան Պատրիարքարանի այսպիսի մի անօրէնութեան վրայ : Այս հարցմանց հրաւիրում ենք ստորագրողներին պատասխանել, և արդարացնել իրանց ազգային պատասխանին առջեւ : Ահա այս հետագայ գրուածքն էլ Ռուսահայոց նկատողութիւնն է այդ խընդիր և առաջարկութիւն ասուած գրուածքի մասին :

Մասնաւունիւններ այն ինդիքտի վրայ, « Ե՞՞ ո՞ ա՞կել է՞ն էջմիածնոյ անուշին Կոսովանուուուուցըն Հայոց աղբային Գեղադոյն Ժողովի կողմանէ այն որենի հաջեւորակունները :

Յաւալի էր յոյժ կարգալ խնդիրքն, որն որ ուղարկել էին Գեղադոյն ժողովը, որ անուանվում է աղբային եւ հոգեւոր գատարան, ասորագրութեամբ այնպիսի անձանց, որպիսի է Յակոբոս (Պատրիարքը) արք եպիսկոպոսը, որին Հայերը համարում են պաշտպան եկեղեցւոյ եւ աղքի իրաւանցը :

Այն անձինքը, որնք ստորագրել են այն խնդիրքը, բոլոր Աղքին ենտ ժառանգեցին իրանց հարց եկեղեցին, որն որ պահպանուեցաւ նոյս նախնեաց մարտիրոսական արիւնովը թէ հեթանոսների հալածանքից եւ թէ Յունաց մոլեռանդութենից եւ Ֆանատիկոսութենից :

Հայոց աղքը Գրիգոր Լուսաւորչի օրերից մինչեւ ցայժմ չխնայելով ոչինչ ; իր եկեղեցւոյ պաշտպանութեան համար, համարուս է իր եկեղեցին, (Առաջին և Առաջեւական,) (Հաւատամիք 'ի սուրբ յառաքելական Եկեղեցի,) նա կոչում է առաջի, որովհեաւեւ չունի նա ոչ մի մոլորութիւն, սխալ եւ պակասութիւն, կոչվում է առաջեւական, ըստ որում նրա ուսումն հիմնուած է Աւետարանի յաւատենական ճշմարտութեանց վերայ :

Այն անձինքը, որնք ստորագրել են այն խնդիրքը, ուսուցել են ուրիշներուն եւ իրանք էլ մինչեւ ցայժմ կրկնել են « Հաւատամիք 'ի առաջի և յառաջեւական Եկեղեցց » . Խակ այժմ հարկաւոր են համարում կանչել ժողով նոյն խակ եկեղեցւոյ պակասութիւնները լրացնելոյ եւ նրա ուսման մէջ եղած սխալները ուղղելու (Յօդ. 9) . ուրեմն Գեղագոյն ժողովը ընդունում է որ Հայոց եկեղեցւոյ ուսումն ունի պակասութիւններ եւ սխալներ եւ սրանով հեռացնում է ինքն իրան նրա զողից եւ բաժանվում է այն աղքից, որն որ եկեղեցին համարում է Առաջի եւ Առաջեւական :

Ինչո՞ւ Գերագոյն ժողովը ուղիղ եւ յայտնի չէ ասում, ինչ է պակաս մեր եկեղեցւոյ ուսման մէջ եւ ինչ է վրիպականը նրա մէջ

թէ այն խնդրոյ մէջ դրգող եւ սխալեցուցիչ զօրութիւն չկայ ինչնու է հարկաւոր ժողով կոչել եւ բնչ է նշանակում այս անորոշ եւ ընդհանուր նախադասութիւնները , «թէ ջնջածը սուսանայ է՞ր պես , պակասը լուսունք և գիտականը ուղղունք » :

Բարձրագոյն ժողովը պահանջում է դատաստան նոցա գէմ , որոնք չեն յանձն առնուլ հնազանդուիլ այս ժողովի վճիռներուն , Ազգը , որի բոլոր ազատմական կեանքն է միայն մարտիրոսութիւն իր հաւատի համար , Ազգը որն որ չլախեցաւ Շապոհներից , Յաղկերաններից Յուսուփներից եւ Լէսկիթէմուրներից , միթէ կուրանայ իւր հարց հաւատը գաւառական եւ նահանդական դատաստանաց ահից : Ապահնալ այս ազգին կարծելով թէ նա կուրանայ իր հաւատը երկիւղից , նշանակում է չճանաչել ազգը եւ չգիտենալ նրա պատմութիւնը :

Հայոց Եկեղեցւոյ Եպիսկոպոսներն եւ վարդապետները սպառնալով ազգին դատաստան , մոռանում են Պօլոս առաքեալի խօսքերը , թէ «Զի՞ դատես զեղբայր քո կամ ընդէր անդամնես զեղբայր քոյ , քանզի ամենեքին դալոց եմք առաջի առենին Փրիստոսի » :

Առաջ Հայոց Գլուխուն 10:

Գերագոյն ժողովը ասում է իր խնդիրքի մէջ , թէ կաթողիկոսներից մէկը չի հոգս քաշել կատարելու բոլոր գրածները այն խնդրքի մէջ , նա նորան չի ճանաչել արժանաւոր յաջորդ բնդհանդական պատրիարքութեան : Ուրեմն սրանով ժողովը չէ ընդունում օրինաւոր նախորդ կաթողիկոսներին , որոնք հետի էին ամենեւին Եկեղեցւոյ ուսման մէջ նորոգութիւններ մտցնելու մաքից եւ որոնց շատերուն եկեղեցին դասել է 'ի շարս սրբոց :

Կաթողիկոսն եւ այլ Եկեղեցականք Հայոց իրանց օծման ժամանակը երգում են տալիս անխոփոխ պահել մեր Եկեղեցւոյ ուսումնին , որն որ սուրբ է ընդունում միայն երեք բնդհանդական ժողովներ , ուրեմն ամենայն նորածեւութեան մտցնելը նրա մէջ , է երգմանազութիւն , դաւաճանութիւն եւ հերետիկոսութիւն եւ ամեն նորածեւութիւն մտցնողն է երգմանազունց , դաւաճան եւ հերետիկոս : Եթէ այս նորածեւութիւնը ըսնութեամբ հաստատուի այն կարծեցեալ ժողովով , Հայերը , որոնք հաւատարիմ են Լուսաւորչի վարդապետութեանը , դուրս կը գան Եկեղեցից եւ ինչպէս Եղիշէի ժամանակներն էր , որոնց Եկեղեցիները Պարսից թագաւորը վակեց , կը դարձնեն իրանց աները Եկեղեցի , իրանց անձը կը լինին վկայարան տուն եւ տաճար աւելի գերազանց քան ամենայն հողեղէն շնուրածներ (դարձեալ թէպէտ վակեաց եւ կնքեաց ըզ դրունս Եկեղեցեացն ընդ ամենայն աշխարհն , նոքա դամնայն տուն

եկեղեցի արարին , յամենացն տեղւոջ զիւրեանց օրէնս կատարէին եւ զանձնա իւրաքանչիւր վկայարանս համարէին , եւ լաւագոյն ըզ շնուռածու մարդկեղէնս քան գհողեղէնս համարէին ) : Այսպէս ահա տեսնում ենք , որ այս խնդիրքը ընդդէմ է մեր եկեղեցւոյ դաւանութեանը . բայց եթէ քննունք նրան քաղաքական կողմանէ կը տեսնենք , որ այս կողմիցն էլ ամենեւին հակառակ է նա մեր ազգի օգտին :

Եկեղեցին ունի մեծ բարոյական նշանակութիւն Հայոց ազգի պատմութեան մէջ , նա է նրա բարոյական զօրութեան եւ միութեան հիմն , նա ազատեց նրա աղքանութիւնը եւ գոյութիւնը : Այս եկեղեցւոյ ինքնիշխանութեանը ձեռք տալը՝ նշանակում է դաւաճան գտնութիւ ազգի աղքութեանը եւ նրա գոյութեանը : Այս պատճառաւ մեր թշնամիները կամենալով ջնջել մեր աղքութիւնը , աշխատէին լինում նախ մեր եկեղեցւոյ անկախութիւնը վերացնել : Այսպէս յայտնի է մեզ պատմութենից : Տիւզանդիոնի կառավարութիւնը քաջ ճանաչելով , որ Հայոց զօրութիւնը պարունակում է նուցա եկեղեցւոյ միութեան եւ անկախութեան մէջ , ոչ մի միջոց անսուրբ չէր համարում այդ անկախութիւնը ջնջելու համար , եւ չատանգամ բայց էր անում ինզիր երկուց եկեղեցեաց միութեան մասին , կարդալով պատմութիւնն այն ժողովքներու , որ հաւաքուեցան այս նպատակաւ , զարմանում ենք , կարծես ինքը նախախմնամութիւնը . ընդդիմանում էր այս վաստակար (կորսատքեր) միութեանը : Հռոմիլայի ժողովքի անյաջողութիւնը Ներսէս չնորհալոյ ժամանակին , է մի զարմանալի երեւոյթ , որ յայտնի վկայում է , թէ Աստուածային նախախմնամութիւնը պաշտպանում էր հայերուն այս միութենից , որն որ պէտք է պատճառէր նոյս գոյութեան վերջին եւ վճռական հարուած , եւ էլի պահպանում է անշուշտ Հայոց ազգը մի արժանաւոր ապակայի համար : Միեւնոյն սկզբունքներն են , ըստ երեւութիւն , առաջնորդ Ռուսաց կառավարութեան էլ Հայոց ազգին վերաբերեալ գործքերուն . այս նպատակաւ աքսորեցաւ Ներսէմն Բէսարաքիսա , գրուեցաւ կամոնազրութիւն Հայոց եկեղեցւոյ համար Ռուսաստանի մէջ եւ բազմիցս բայցւեցաւ հարցումն երկու եկեղեցեաց միութեան մասին :

Երեւեկան պատերազմի վերջանալուց յետոյ , երբ Ռուսաստանը յաւիտեան կորցրեց Աեաւ ծովը եւ ընդ նմին իր առաջուան նշանակութիւնը արեւելքումը , նա կպաւ Հայերուն , որոնց թիւը Տաճկաստանի մէջ հասանում է մինչեւ երեք միլիոն եւ որոնց նշանակութիւնը այստեղ չէ աննշան : Խակ աւելի լաւ մօտեցնելու համար նրանց Ռուսաստանի հետ եւ միաւորելու նրանց օգուար իրանը հետ

Կառավարութիւնը աշխատում է երկու եկեղեցիները միաւսըելու : Այս նպատակաւ Սարգիս եպիսկոպոսը եւ վարդապետ Այվաղովսկին նշանակուեցան վիճակաւորք, Այվաղովսկին բաց արեց գպրոց, յանհարծ մեռաւ ներսէոը, ընտրուեցաւ Տաճկաստամսից Մատթէոսը, որն որ գուցէ խոստացել է օգնական լինել կառավարութեան գիտաւորութեանցը . Ռուսաց գեւապանի հետազոտութեամբը եւ աշխատանքովը կոստանդնուպալուսոյ Պատրիարքական աթոռը նատաւ Գէորգը, որ հաւատարիմ է Ռուսաստանի նպատակներին, վարցարուեցան եպիսկոպոսը եւ ամիրայք եւ վերջապէս նոյն խակ Ռուսաց գեւապանի համոզմամբը գրած է այս խնդիրքը, որի վերայ գրում ենք մեր ծանօթութիւնները : Աստուած մի արասցէ եթէ այս առաջարկութիւնը կատարուի, հետեւանքն յայտնի են եւ անփուռակի (Յօդ. 4), զօրութեամբ կաթողիկոսը կը հաւաքի ժողով վիճակաւոր եպիսկոպունկրից (օրոնց գլխաւորներն յիշեցինք) վարդապետներից եւ այլ անձններից, որոնք հարազատ չեն ազգի օգալն եւ հաւատարիմ որպէս եւ Եղր կաթողիկոսի ժամանակն էլ, եւ հիմնուելով Յօդ. 9ի վրայ, այս ժողովումը կընդունուի Քաղկեդոնի ժողովը, կը ջնջուի որպէս վրիսական այս ամեննը որով զանազանվում է Հայոց եկեղեցին սուառ ուղղափառներից եւ կը լրացնի պական. խակ օրոնքոր կընդգիւմանան ժողովի վճիռներուն հնազանդուիլ, կաթողիկոսը (Յօդ. 5), զօրութեամբ այնպիսիներու կը դատէ իրեւ մոլորեալներուն, իբրեւ օրինազանցներուն, իբրեւ արմատացածներուն մոլորութեանց մէջ եւ իբրեւ ասլատամբներուն իրենց օրինաւոր եպիսկոպուների եւ հոգեւոր ժողովների վճիռներու գէմ : Այն ժամանակը, երբ Հայոց աղջը նոր սկսում է զգալ բարերար ազգեցութիւնը 49. գարի, սկսում է ծանօթանալ Եւրոպական լուսաւորութեան հետ, պարագեցնել նրա մոքերը կրօնական երկարութակութիւններով, կարգել նրանց վերայ նոր Խնկվիղիցիա (հաւատաքննութիւն) նշանակում է ոչ այլ ինչ, բայց եթէ յետ գցել նրան էլի մի ամբողջ գար : Մի գործ, որ անվայել է, ճշմարիտ քրիստոնէին, անվայել է արդարաբատում մարդու :

Ցայտնի երեւում է, որ Ռուսաց կառավարութեան առաջնորդը, որ համոզել է գերագոյն ժողովը եւ հոգեւոր դատարանը գրելու այնպիսի խնդիր, եղել է նրա կի իդէան, որ է տալ Կաթողիկոսին զօրութիւն եւ նշանակութիւն, որ նա ունենայ վճոողական ազգեցութիւն բոլոր Հայոց վերայ եւ օրովհետեւ Կաթողիկոսը գտնվում է կառավարութեան իշխանութեան տակը, այդ ազգեցութիւնը բնականապէս կանցանէ Ռուսաց կառավարութեան ձեռքը, որն որ նայելով 4, 5 եւ 9 յօդուածների 'ի գործ կը դնէ նրան՝ հաս-

նեղու համար , երբեմն Յունաց եւ այժմ իրան սիրելի նպատակին , այսինքն միութեան եկեղեցւոյ : Վհասակար հետեւանքը այսպիսի դէպքի ակներեւ է եւ համանալի ամեն խոռական հային , վասն ուրոյ եւ աւելորդ ենք համարում մամբամանաբար խօսել նրա վերայ : Ուստի ամեն Հայ առանձին եւ բոլոր Հայերը միասին պէտք է 'ի գործ դնեն իրանցից կախուած ամեն միջոցները վերսցիշեալ խընդիրքը անկատար թողնելու համար :

Հայոց ազգի այժմեան գրութեան վիճակը նկարագրելուց յետոյ եւ ցոյց տալուց , թէ որ նկատման կէտից պէտք է նայել վերոյիշեալ խնդրքին վերայ , աւելորդ համարեցինք քննել ամեն մի մասը նոյն խնդրքին , որովհետեւ նոքա ամենքն էլ դէպ 'ի մի եւ նոյն վերոյիշեալ նպատակին են դիմում Ռուսաց կառավարութեան , այն է հպատակացնել հայերուն կաթողիկոսին , որ նրանով հասանի իւր նպատակին , այսինքն չնշել հայոց ազգութիւնը : Սույ , Աղթամարի կաթողիկոսներին , Կ պօլսոյ եւ Երուսաղեմի Պատրիարքներուն Էջմիածնայ կաթողիկոսին հպատակեցնելուց յետ , կառավարութիւնը չյապտղի որա գլխին էլ բերելու էն բանը , ինչ որ բերեց իր (Թուսաց) պատրիարքի գլխին , այսինքն փոխանակելու կաթողիկոսին Սինօդական կառավարութեամբ : Այն ժամանակն կասենք մնաս բարեւ ։ Յ գարեկան անկախ եկեղեցի Հայոց , կորաւ եւ Հայոց ազգը , կենդանի օրինակ մեզ կարող է լինել այս բամումը այժմ Վրաստանը , ուր համարեա թէ ամեն եկեղեցիներուն աստուածուաշտութիւնը կատարում են Ռուսաց եկեղեցականները եւ առհասարակ չեն տապում ազգային լեզուով սուրբ գրքեր կամ հոգեւոր պարունակութեան գրուածներ : Ո՞վ բարձրագոյն ժողով եւ հոգեւոր դատարան , դուք , որ ձեր նորաձեւութիւններովը կամենում էք բաժնուիլ ազգից , որն որ այսքան տարիներ գաւանում է իր եկեղեցին Սուրբ եւ Առաքելական , կասենք ձեզ Եղիշէի հետ , « Կափուցէք զաշս յընթերցուածոց եւ խցէք զականչո 'ի լսելեաց , միթէ ըզ մտացդ անմոռացութիւն ոչ յիշեցէք , զի՞նչ առնիցէք զպատուիրեալն 'ի Տեառնէ , վարդապետք էիք առաքելական քարոզութեանցն , արդ աշակերտք լինիցիք մոլար խարէութեանն , ուսուցիչ էիք ճշմարտութեան , արդ ուսուցանէք զմոլար խարէութիւն , յանդիմանիցք էիք ստութեան , արդ եւ քան զսումն ստագոյն լինիցիք » , ընդունելով սխալներ եւ պակասութիւններ Գրիգոր Լուսաւորչի սուրբ եւ առաքելական եկեղեցուն :

Յիշեցէք Հայեր , կասենք Եղիշէի հետ միասին , որ « սուրբ մարտիրոսաց մահուամբն հաստատեցաւ սուրբ Եկեղեցի ձեր եւ հեղումն արեան իւրեանց մինչեւ 'ի պարծանու վերնոց եւ ներքնոց :

Այս գլուածքէն հարիւրաւոր օրինակներ տպուեցան բուլոր Ռուսահայոց մէջ, շատ փոքր ժամանակի միջոցումը։ Ամեն տեղ Գէորգ Պատրիարքն ու Հոգեւոր և Գերագոյն ժողովներն ծան ու ծանակ եղան և Պօլոյ աղդայնոց եկեղեցան և աղդային ուսմանց և գիտութեանց մէջ ինչ աստիճան գեռ երեխայ համբակ լինելն յայտնուեցաւ։ Ինչովէն նաև պէտք է համարուի իբրև դարավերջ, և վերջին յիմարութիւն հին Վարչութեան պատմութեան մէջ այս դէպքը, որու վրայ հաստատուեցաւ սահմանադրական Վարչութիւնը և վերջ ասուաւ մեր եպիսկոպոսների և ամիրանների անուանմանութեամբ և անդիտութեամբ արած կամովի տնօրէնութեանց և կարգադրութեանց աղդին մէջ։

Ահաւասիկ և այն չորս նշանաւոր անձանց այսինքն Գէորգ Երամեանի, կարապետ Գրիգորեանի (Ղալֆա կամ Պալեան) Պօլոս Ցատեանի, Յովհաննէս Ցատեանի ստորագրութեամբ գրուած նամակն Մելիքեանց Միքայելին, Խնդիր և Առաջարկութիւն ասուած գրուածքի պաշտպանութեան համար։

Վաեմաշուք եւ Խմանազուն (1) Տէր զօրապետ,

Բաղդաւոր համարիմք զմեղ զի ընդ քաջափայլ իշխանիդ մտերմացաք մեք ուերս սիրով 'ի դալսուեան ձերում այսր, որով խրախուսենիք այժմ գրով մերով ծանուցանել ձեղ զկարեւորագոյն ինչ իրաց, թէպէտ ոչ մեզ եւ ոչ տեառնդ ախորմելի ինչ այլ մանաւանդ վշտացամիթ։

Զեն անկեալ ի մտաց ձերոց այն ամենայն բանք եւ խորհուրդք մեր զօր յամենայն տեսութեան մերում ծանուցանէաք ձեզ, թէ որպէս կարեւոր է ազդի մերում բնակելոցս 'ի Տաճկաստան եւ 'ի Քուսաստան 'ի հոգեւորս հաղորդութիւն ունել զիբերաց եւ միով յօդակապութեամբ 'ի մի սիրս եւ 'ի մի կամս կցորդիլ ընդ միմեանն եւ մի մնալ այսպէս օտարացեալս, եւ վասն այսպիսի ցանկալի միութեան որպէս հարկաւոր իցէ գումարումն ընդհանրական ժողովոյ։ Զայսոսիկ ձեզ կրկնել աւելորդ համարիմք այլ յիշէք զի զայս ամենայն ոչ ձեզ միայն յայտնէաք այլ եւ Վեհափառին եւ եկելոյն

(1) Մելիքեանց Միքայելն ամենեւին իշխանազուն չէ, այլ մի փողառեր քաղաքացուց որդի, միայն իշխանազն Արդութէնց աղջկան հետ ամնանացելէ

այսոր հրաւիրակ , եւ եթէ որպէս եւ դուք ամենեքին համաձայն էիք նոյն միտո եւ զովէիք զառաջարկութիւն մեր եւ յուսացուցանէիք դիտել մեղ զբաղճանս մեր ջամիւք սուրբ Աթոռոյն եւ համազգային իշխանաց որք այդք , վասն որոյ ձերով դիտութեամբ եւ հաւանութեամբ զբեցաք զայտ ամենայն առ սուրբ Սինօդն լրութեամբ աղջիս որ ասու . եւ ՚ի ձեռն ձեր առաքեցաք առ Սինօդն եւ միացաք ժամէ ՚ի ժամ յուսալից պատասխանի ինչ ընդունել : Բայց ընդ հակառակն լուր հնչեաց , որպէս թէ զմնդունս զիտուն խորազնին ումանց հոտ բուրեալ է ՚ի յայտագրէ աստի քաղկեդոնականութեան . վաշ հանձարոյ նոյցա (1) :

Եթէ դուք , քաշակայլ Տէր , դձեղ միայն քաղաքական իրաց հմուտ ասիցէք եւ զոտեւորս հոգեւորականաց թողեալ , չվնիք միջամուխ այսպիսի ինսդիրս , եթէ մեր յայնժամ հանդերձ Պատրիարքաւ մերով եւ կրկին ժազալով մերով եւ այնքան եկեղեցականօք մերովք անմտացաք : Ո՞րպէս եւ վեհականուն եւ հրաւիրակն եկեալքն ոչ առին զհուս ասս ի յայտագրէ աստի որ ապա ի տեղափոխելն ի գուրս ժայթքեալ եղեւ : (2)

Արդ այսպիսի իմաստունքդ ոչ միայն զբնակիչմն Արարատայ դայթակղեցուցեալ են այդպիսի զրաբանութեամբ , այլ եւ մինչեւ ի Պետրուրդ եւ ի Տոնկուայ հասուցեալ զնոյն խորով : Գիտասածիք Տէր , զի այդպիսի բանք եւ ոչ պատասխանույց արժանի եղեն , այլ զի գրեթէ պաշտօնական կերպիւ լուաք ի Հայտար էֆէնտիէ , որ նախկին գեսպան ի Ռուսական արքունիւնուն էր , թէ ազնուականք Պետրուրդի վասն այդք բողոքեալ են ընդդէմ մեր եւ դանձինս ոչ համայն ասելով այդմ խորհրդոյ զմեղ մեղադրեալ են , պարտ վարկաք բժշկել ի մտաց նոյցա զկարծիս որք միամուութեամբ անսացեալ են քոռ բանսարկուաց :

(1) Այս քաղեղոնականութեան խօսքն առաջն անդամ առաջն է Մակար եպիսկոպոսը Մելքոնց Միքայելին . երբ աս Մատթէոսի Թիֆլիզ հանելուց եօմն որ յետոյ , եկել էր Մակարի մօս այս թղթերը յանձնելու և ինսդրելու , որ նս ամեն ջանք անէ . գոնէ ժողովը կատարուի , երբ խորագէտն Մակար պատասխանում է նրան թէ՝ գիտե՞ս ինչ բանի համար է այդ ժողովն , ուրիշ ո՞չ ինչ , բայց յիայն Քաղկեդոնականը բնդունելու : Մելքոնանց ոչ Քաղկեդոն գիտէր , ոչ ժողովն և ի՞նչէ այդ Քաղկեդոն հարցնում է , Մակարն կը կնում է , մեղ Ռուս շննել . ի՞նչ պատասխն է , Միքոցէլ Տօն Գիշօմի նման , և ձեռք սուրբն տանելով , ուստի էն վախիթ եր բերանը շուռ կուտայ իմ հաւատու թշնամիներին դէմ» : Կատակակերգութիւն : Ուրիշ անդամ մանրամասն :

(2) Մակարի ներայի տան մէջ երկու երեք օր իր սենեկի մէջ փակուելուն և Մելքոնց Միքայելի հետ ունեցած լուռ ու մունչ անբաւականութեան վրաց կամ անդեակ չեն այս ամիրացքը կամ թէ տեղեակ են ու թագյնում են . իսկ Մատթէոսին ամենեւին ցոյց չեն տուած այդ գրուածքը :

Այլ զի զամենայն ինչ մանրամասն գրել եւ ցուցանել դժուարին է, զձեղ Տէր զօրապետ, աղաջեմքը որ այսո՞ւ ամենայնի տեղեկագոյն էք, ձերով զօրաւոր բանիւք ծանուցիք ամենայն եղբարց մերոց զմեր դիմաւորութիւնն, թէ զիարդ մեք ցանկացողք եմք մի միայն սիրային կապակցութեան աղդիս մերում ի հոգեւորս եւ բարեկարդութեան եկեղեցական իրաց եւ արարողութեանց զի համաձայն լիցին յամենայն աեղիս եւ զի այսպիսի միասիրս կամօք կարող լերուք ընդդէմ կալ կաթողիկութեան եւ բողոքականութեան որ զազդութիւն մեր եւ զեկեղեցին խանդարեն: իսկ զբան հաւատոյ եկեղեցականաց է քննել եւ զիտել եւ մեղ ուսուցանել: մեք ու եմք զի իշխանցուք զայս ինչ եւ զայն մուծանել ի յուղափառ զաւանութեան մերում: Վեհափառն ի մանկութեան աստ ծննեալ եւ զարգացեալ յորմւմ ժամանակի զայդպիսի բանս եւ կարծիս լուսու ի մէնջ: Խնքնին ճշմարտախօս վկայ կարէ լինիլ կրօնական զգացմանց մերոց:

Այլ թէ այցելութիւն Պատրիարքին Յունաց ի մերս Պատրիարքարան տեղի տուեալ իցէ այդպիսի զրախօսութիւնէ: զիտել պարտ է թէ այդ ոչ նոր ինչ գործ է այլ ի վազուց անտի սովորութիւն եւ սուէպ պատահեալ: քանդի քաղաքական կացութիւն տէրութեանս ոչ ներէ մեզ անքաղաքավար լինել ընդ այլ քրիստոնեայ աղինս: Ո՞ւր զի մանաւանդ յայսմ նուազի այցելութիւն Պատրիարքին Յունաց զայս նախանձելի արդիւնս ծանոյց զի հարցեալ հաւանեցան նոքա մի եւս այսուհետեւ միլոտել զչայն քրիստոնեայ եթէ տարաբաղդաբար ի Յունական եկեղեցւոյ երթիցէ եւ զմի անդամ ամուսնացեալն ի մեզ մի եւս կրկնին ամուսնացուցանել յորժամ կին կամ այր օձտելոյն ի մէնջ կենդանի իցէ:

Արդ որք ի վերայ յիշատակեալ իրաց նիւթուն հայթայթիցին չարխօսութեան, այնպիսի բանաքաղբն ի չորացեալ արմատոյ անտի Հաղբատացւոց բուսան որք զԱզդն երբեմն մեծապէս խոռվեցին եւ սոքա զի տեսանեն մեզ ցանկացողս միւթեան կամին զի յերկառակութեան կացելմք, Տէր տեսցէ եւ զարիւն պատակտելոց ընդ հուպ ի գլուխ նոյցա հեղցէ: (Աֆրայտ անէծել եւ բէրդն եղէլ):

Արդ աղաջեմ զձեզ, զի հաճեսջիք վասն սիրոյ մակրմութեանս ծանուցանել ամենեցուն այնոցիկ որք խաբեալ են ի չարախօսաց անսափ եւ որպէս քաջ ծանեար զմեր ներքին խորհուրդ յայտնեան նոյցա զի ի բաց դիցեն զգայթակղութիւն իւրեանց եւ մի անսայցին այնպիսի անձանց որք զորոմն ի յորիւնոյ սերմանել ժապհին, խընդրեսցին ապաքէն զյայտազիր մեր, տեսցին եւ մի ան մի զամենայն բանս քննեսցին եւ յայնժամ խելամուտ լինին թէ մեք որպէս բարեկարդութեան սրբոյ եկեղեցւոյ մերում նախանձախնդիր եմք եւ

նորաձեւութեանց հակառակ ընդդէմ, զիմբրդ ջատագով եւ պաշտապան եմք դաւանութիւն սուրբ եկեղեցւոյն եւ զանձինս հարազատ ծնունդ սրբոյ և ուսաւորչին դիտեմք եւ հպատակ նորին Աթոռոյ եւ Աթոռակալաց :

Հաճեսցուք վմեմափայլ Տէր զօրապետ ի կարճոյ ասացուածոցու նիւթ առեալ ձերովդ ճարտար եւ համողակիր բանիւք շինել զմիտս նոցա , դիտասջիք սովորն մոօք եւս առաւել ընդարձակագոյնս զըրեցաք եւ առ Սրբազնասուրբ Վեհապեան մեր եւ կաթողիկոս ամենայն Լուսաւորչածին Հայկեանցու , որպէս եւ առ Գերապատիւ Սարդիս Արքեպիսկոպոսն առաջնորդ վիճակին Տիխիսու :

Երանի զի այսու որոգայթքս լարեալ յանիրաւ բանսարկուայ բեկեալ եւ ի դերեւս եկեալ մերս եւ դայթակղելոցն սիրտք հանդիցեն : Զայս երախտիս խնդրեմք ի ձէնջ եւ այսմ ակնկալեալ ի ձերմէդ մտերմութենէ , ասցուք փառս Աստուծոյ եւ ձեզ՝ չնորհս կալցուք մաղթելով ձեզ զամենայն բարութիւն :

Կ. Պոլիս ի 27 Ապրիլի 1860

Գէորգ Երամեան .

Պաղա Տարեան .

Կարապետ Գրեգորեան .

Յակովանիս Տարեան .

Առ Վաճառակայլ Խշան եւ Գաջաղուն Զօրապետ Մ. Մելիքով  
Սպարապետ Տաղիստանու (Երբէք չէ ունեցած այդ պաշտօնք) եւն  
ի Տփիլս

Մելիքենց Միքայելին Երկրորդ անդամ Պոլիս դալուց և  
դառնալուց յետոյ է դրուած այս նամակն նոյնպէս Զալալւ  
եանցին և Մատթէոսին դրուածները . թէ ի՞նչ նշանակու  
թիւն ունեցան այս թղթերը ժողովրդին մէջ Ռուսիայում և  
թէ յտէսայու տէրութենական օրագրումն ինչ հրատարակ  
ուեցաւ Միքայելի Երկրորդ անդամ դէպի Պոլիս ճամբորդե  
լու մասին և թէ ի՞նչ կերպով Երես ունեցաւ Այվաղեան  
Գաբրիէն վեր կենալ ու պաշտպանել և Զալալեանցն էլ իր  
նամակին հրատարակել Մեղու Հայաստանի լրադրին մէջ ,  
մենք իր տեղին այս յիշատակարանիս մէջ մանրատմասն պիտի  
յառաջը բերենք ընթերցողին : Զենք իմանում , ինչո՞ւ այս  
ամիրայքն են վեր կացել Խնդիրն ու Առաջարկութիւնը պաշտ  
պանելու , մինչդեռ Երանց ստորագրութիւնը չի երեւում  
նոյնին մէջ և իրանք չեն անշուշտ այդ բանի հեղինակն . ին  
չո՞ւ լուեցին այն ժամանակ Յակոբ և Գէորգ Պատրիարքներն .  
ամիրայքն իրանց նամակին մէջ խոստովանում են թէ իրանք

ո՞վ են որ կրօնական խնդիրների մէջ խառնուին . խիստ լաւ , հապա ինչո՞ւ են իրանց չգիտեցած ու չհասկցած և իրանց ձեռնհասութենէ դուրս մի բան վեր են կացել պաշտպաննելու , պարաւաելով և անիծելով բանաքննիչներին , որ այդպիսի հետեւանքն են դուրս բերել : Ի վերջոյ մենք կարող ենք , այդ նամակն ամեն կողմէն նկատելով սաստիկ բանաքննութեան ներքեւ գնել , բայց հարկ չենք համարում : Ինչպէս ըստ կըզբումն ասացինք , մենք հաւատում ենք , որ այդ ամիրայքըն շատ միամտութեամբ մասնակից եղած լինին այդ բանին , և անդիսութեամբ խարուած Մելիքենց Միքայելն : Ինքը Մելիքենց Միքայէլը ինչպէս մեզ , նոյնպէս շատերին թիֆլիզումը պարծենալով ասած ունի , թէ ինքնազգի համար մեծ բան ունի շինած ամիրայների և պատրիարքների միաբանութեամբ : Դա՛ ազգի համար բան շինել կարող լինի՞ : Դէպքն ու անցք այս մասին ցոյց տուին թէ ճշմարի՞տ էլն այդ իլուզութիւնքը թէ ո՛չ . ընթերցողէն համբերութիւն կը խնդրենք և ուշադրութեամբ կարդալ : այս յիշատակարանս ու վախճանին իր վճիռը տալ :

Պիտի շարունակուի :

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՅՈՒՆ

**ՄԱՐԿՈՍ ԱՂԱՋԵԳԻԵԱՆ**

Հայոց Կ. ՊՈՂԻՆ, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԵՆԻ Յ. ՔԻՒՐԲԵՏԱՆ